«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԳԱՎԱՌԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2025թ.

ՆԱԽԱԲԱՆ

Գավառի արվեստի պետական քոլեջի (այսուհետ՝ ԳԱՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ .....
ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 10
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 10
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 10
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 13
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 13
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 15
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 20
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 26
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 31
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 34
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 37
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 40
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 43
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 45
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 49
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 50
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 56
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 57
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 58

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

«Գավառի պետական երաժշտական» ուսումնարանը (այժմ՝ Գավառի արվեստի պետական քոլեջ) (այսուհետ՝ ԳԱՊՔ) հիմնադրվել է 1989 թվականին:

Հիմնադրման օրվանից քոլեջի գործունեությունն ուղղված է եղել միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը:

Քոլեջն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Գավառի արվեստի պետական քոլեջը Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համահունչ իրականացնում է միջին մասնագիտական երեք կրթական ծրագիր՝ Գործիքային կատարողական արվեստ՝ ըստ գործիքների տեսակների (դաշնամուր, շվի, դուդուկ, դհոլ, քանոն, որակավորում՝ երաժշտական գործիքի կատարող, դասավանդող), Երգեցողություն (որակավորումը՝ երգիչ-կատարող) և Գեղանկարչություն (որակավորումը՝ նկարիչ-դասավանդող): Քոլեջում ներկայումս կրթություն է ստանում 107 ուսանող: Կրթությունն իրականացվում է առկա ուսուցմամբ:

Քոլեջում գերակշռում են անվճար համակարգում սովորող ուսանողները: Վճարովի համակարգում սովորում է 5 ուսանող: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն տեղի չի ունեցել՝ պայմանավորված մարզի սոցիալական խնդիրներով:

2021-2024 ուսումնական տարիներին ավարտած 80 շրջանավարտների 60%-ն աշխատում է, որից 37.5%-ը՝ ըստ մասնագիտության: Միևնույն ժամանակ, շրջանավարտների 17.5%-ը շարունակում են ուսումը բուհերում, հիմնականում նույն մասնագիտությամբ:

2025-2026 ուստարում քոլեջում դասավանդում են 40 դասախոս (ներառյալ՝ նվագակցողները), որոնցից 30-ը ունեն բարձրագույն կրթություն, 10-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի հիմնական դասախոսների թիվը 21 է, համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը՝ 19: Պրակտիկ փորձառությամբ դասախոսների թիվը 8 է: Քոլեջը խրախուսում է նաև իր շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացներում՝ այս հնարավորությունը դիտարկելով որպես համալրման և կայունության ապահովման մեխանիզմ: Քոլեջի 12 շրջանավարտ դասավանդում են քոլեջում:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Գավառի արվեստի պետական քոլեջի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատման ընթացքում խումբը նկատի է ունեցել, որ քոլեջը տարածաշրջանի արվեստի ոլորտում ունի կարևոր դեր և նշանակություն: Միևնույն ժամանակ հաշվի է առնվել, որ քոլեջը ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ և գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «մասնագիտական կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում գիտելիքի ստեղծման ու հմտությունների ձևավորման, փոխանցման ու տարածման, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորման միջոցով սեփական գործելակերպն ու որոշումներն ազգային շահերին համապատասխանեցման, կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների ու միջազգային փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ կրթական գործունեության իրագործում՝ ուղղված արվեստի ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը»:

Գավառի արվեստի պետական քոլեջը գործում է իր առաքելությանը համապատասխան և իրականացնում է Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համահունչ կրթական ծրագրեր: Քոլեջը կանոնակարգել է իր փաստաթղթային բազան՝ սահմանելով համապատասխան կանոնակարգեր, պլաններ և ապահովել է կառավարման շարունակականությունը:

Միևնույն ժամանակ, խմբի գնահատմամբ, քոլեջի ռազմավարական պլանավորումն ու որոշումների կայացումը դեռևս բավարար չափով չեն հիմնվում տվյալների վրա: Հավաքագրվող տեղեկությունները հիմնականում նկարագրական են, իսկ դրանց վերլուծությունը՝ ոչ ամբողջական և պարբերական: Այդ պատճառով պլանավորումը և հաշվետվությունները միշտ չէ, որ արտացոլում են իրական արդյունքներն ու դրանց ազդեցությունը: Քոլեջն անհրաժեշտություն ունի ներդնելու տվյալների պարբերական հավաքագրման և վերլուծության համակարգ, ինչի արդյունքում կառավարման որոշումները կդառնան ավելի հիմնավորված, իսկ ռեսուրսների օգտագործումը՝ ավելի նպատակային:

Քոլեջը շարունակում է զարգացնել երեք հիմնական կրթական ծրագիր՝ «Գործիքային կատարողական արվեստ», «Երգեցողություն» և «Գեղանկարչություն»: Այս ծրագրերի իրականացումն ապահովում է մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումն ուսանողների մոտ, ինչի արդյունքում քոլեջը կարողանում է պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտներ: Այնուամենայնիվ, գնահատման հստակ չափորոշիչների բացակայությունը և վերջնարդյունքների ոչ չափելի ձևակերպումները սահմանափակում են ուսանողների առաջընթացի օբյեկտիվ գնահատումը:

Դասախոսական կազմը ձևավորվել է փորձառու մասնագետներից և երիտասարդ դասախոսներից, որոնց ներգրավվածությունն ապահովում է դասավանդման մեթոդների բազմազանությունը: Գործատու–պրակտիկ դասախոսների ներգրավումը թույլ է տալիս ուսանողներին ծանոթանալ ոլորտի իրական փորձառությանը: Սակայն դասախոսների վերապատրաստման և փորձի փոխանակման պլանավորված համակարգ դեռևս քոլեջում չկա: Քոլեջի կողմից շարունակական վերապատրաստման քաղաքականության իրականացումը կապահովի դասավանդման որակի բարձրացում, նորարարական մեթոդների կիրառում և ուսումնական գործընթացի արդիականացում:

Հետազոտական աշխատանքների ներառումը դասավանդման գործընթացում դրական քայլ է: Ուսանողները կատարում են վերլուծական և ստեղծագործական առաջադրանքներ, որոնք զարգացնում են նրանց մասնագիտական մտածողությունը: Սակայն հետազոտական աշխատանքների իրականացումը և գնահատումը չեն իրականացվում միասնական մոտեցմամբ: Հետազոտական մեթոդաբանության հստակեցումը և գնահատման չափանիշների ներդրումը կապահովեն ավելի համակարգված մոտեցում, ինչի արդյունքում կբարձրանա ուսանողների վերլուծական կարողությունների և ստեղծագործական մտածողության մակարդակը:

Քոլեջն արդյունավետ է օգտագործում իր սահմանափակ ֆինանսական ռեսուրսները, ինչը թույլ է տալիս կայուն կերպով իրականացնել կրթական ծրագրերը: Սակայն շենքային պայմանների և տեխնիկական միջոցների արդիականացումը շարունակում է մնալ առաջնահերթ խնդիր: Քոլեջի կողմից ֆինանսական մուտքերի բազմազանեցման ռազմավարության ներդրումը՝ ներառելով դրամաշնորհներ և գործընկերային ծրագրեր, հնարավորություն կտա իրականացնել նյութատեխնիկական բազայի շարունակական զարգացում:

Ուսանողների կարիքների վերհանման և արձագանքման մեխանիզմները նպաստել են ուսումնական միջավայրի բարելավմանը, օրինակ՝ լսարանների վերանորոգման և անհրաժեշտ նյութերի ձեռքբերման միջոցով: Սակայն կարիերայի կենտրոնի աշխատանքը դեռևս թույլ ազդեցություն ունի շրջանավարտների աշխատանքի տեղավորման վրա: Եթե շրջանավարտների տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը դառնան պարբերական, ապա քոլեջը կկարողանա ծրագրերը համահնչեցնել աշխատաշուկայի պահանջներին և բարձրացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակը:

Քոլեջն իր հանրային պատասխանատվությունը դրսևորում է համայնքի հետ մշակութային համագործակցությամբ՝ կազմակերպելով համերգներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Այս միջոցառումները նպաստում են համայնքային ճանաչելիությանը և հաստատության հեղինակության բարձրացմանը: Նորաստեղծ վեբ կայքը հնարավորություն կտա ապահովել տեղեկատվության թափանցիկություն, սակայն դրա լրացումը և պարբերական թարմացումը անհրաժեշտ է՝ շահակիցների իրազեկվածությունը բարձրացնելու համար:

Միջազգային համագործակցության ոլորտում քոլեջը դեռևս սկզբնական փուլում է: Օտար լեզվի դասընթացների իրականացումը և միջազգային ծրագրերին մասնակցությունը կարող են զգալիորեն ընդլայնել զարգացման և դասավանդողների կարողությունների կատարելագործման հնարավորությունները: Այս ուղղությամբ հետևողական աշխատանքը կնպաստի դասախոսների և ուսանողների մասնագիտական հմտությունների ընդլայնմանը, միջազգային փորձի փոխանակմանը և կրթական ծրագրերի արդիականացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կայուն հիմք ունի հետագա զարգացման համար: Ներկայումս ձևավորված ուսանողակենտրոն մոտեցումները կարող են դառնալ արդյունավետ զարգացման հնարավորություն: Այս նպատակով քոլեջին անհրաժեշտ է ամրապնդել տվյալահենք որոշումների մշակույթը, հստակեցնել գնահատման համակարգը, զարգացնել

հետազոտական բաղադրիչը և ընդլայնել միջազգային համագործակցությունը, ինչը թույլ կտա հասնել հաստատության ռազմավարական նպատակներին՝ պատրաստելով մրցունակ, ստեղծագործ և ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետներ։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. տարածաշրջանի արվեստի և երաժշտական դպրոցների շարունակական համալրումը քոլեջի շրջանավարտ դասավանդողներով,
2. մոդուլներում գործնական բաղադրիչի գերակշռումը՝ կատարողական հմտությունների ձևավորման նպատակով,
3. երիտասարդ դասախոսների և շրջանավարտների ներգրավումը՝ դասախոսական կազմի կայունության և ծրագրերի շարունակականության ապահովման համար,
4. պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը դասավանդման գործընթացում ուսանողների գործնական հմտությունների և կատարողական կարողությունների զարգացման նպատակով,
5. ուսանողներին տրվող առաջադրանքների ստեղծագործական բնույթը,
6. տարածաշրջանում մշակութային արժեքների փոխանցմանն ուղղված քոլեջի նախաձեռնությունները։

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական նպատակների գնահատման ցուցիչների բացակայությունը,
2. պլանավորման և հաշվետվողականության գործընթացների թույլ փոխկապակցվածությունը, հաշվետվությունների ոչ վերլուծական բնույթը,
3. ֆինանսական այլընտրանքային աղբյուրների բացակայությունը,
4. ուսանողներին տրվող առաջադրանքների գնահատման չափանիշների անհստակությունը,
5. դասախոսական կազմի կարիքների գնահատման և կարողությունների զարգացման ոչ համակարգված մոտեցումը,
6. արտաքին կապերի և փորձի փոխանակման գործընթացների ոչ համակարգված բնույթը,
7. ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության թույլ մակարդակը և քոլեջի կողմից լեզվաիմացության բարելավմանն ուղղված միջոցառումների պակասը,
8. տվյալների հավաքագրման մեխանիզմների ոչ արդյունավետ կիրառումը և կառավարչական որոշումների հիմնված չլինելը հավաստի տվյալների վրա։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել քոլեջի առաքելությունը՝ պարզ և հստակ ձևակերպելով, թե որ մասնագիտական ուղղություններով է քոլեջը պատրաստում մասնագետներ (օրինակ՝ երաժշտություն, գեղարվեստ) և ինչ արդյունք է սպասվում շրջանավարտներից, որպեսզի առաքելությունը դառնա իրական ուղեցույց քոլեջի ծրագրերի, պլանների և որոշումների համար։
2. Վերանայել ռազմավարական ծրագրի նպատակները՝ յուրաքանչյուր նպատակի տակ սահմանելով չափելի արդյունքներ և ակնկալվող ազդեցություններ (օրինակ՝ շրջանավարտների զբաղվածության աճ, գործատուների հետ համագործակցության ընդլայնում), որպեսզի ծրագիրը ծառայի որպես կառավարման և գնահատման գործնական գործիք։

3. Վերանայել Կառավարման խորհրդի աշխատանքի ձևաչափը՝ ապահովելով, որ այն չսահմանափակվի միայն ընթացիկ հաստատումներով, այլ դառնա երկարաժամկետ նախաձեռնությունների և զարգացման նոր ուղղությունների քննարկման իրական հարթակ՝ հիմնված տվյալների և ռեսուրսների վերլուծության վրա։
4. Վերանայել և օպտիմալացնել քոլեջի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնելով գործառույթները և ամրապնդելով բաժինների միջև համագործակցության հորիզոնական կապերը՝ ապահովելու կառավարման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը։
5. Հստակեցնել կրթական ծրագրերի կառավարման համակարգը՝ յուրաքանչյուր ծրագրի համար սահմանելով պատասխանատու, որի գործառույթները ներառեն ծրագրի պարբերական վերանայում, տվյալների վերլուծություն և բարելավման պլանների մշակում։
6. Գործարկել որակի ապահովման համակարգը ՊԻԳԲ տրամաբանությամբ՝ ապահովելով, որ յուրաքանչյուր գործընթաց պլանավորվի, իրականացվի, գնահատվի և բարելավվի՝ ՈԱ համակարգը դարձնելով շարունակական բարելավման գործիք։
7. Բարելավել հարցումների մեթոդաբանությունը՝ հստակեցնելով դրանց նպատակները, պարբերականությունը և հարցաշարերի կառուցվածքը, որպեսզի ստացված տվյալները դառնան որոշումների կայացման և բարելավման գործողությունների մշակման հուսալի հիմք։
8. Վերանայել ֆինանսական պլանավորումը՝ ռեսուրսների բաշխումն ուղղելով երկարաժամկետ զարգացման առաջնահերթություններին, մասնավորապես՝ դասախոսների մասնագիտական զարգացման, կրթական միջավայրի արդիականացման և նոր կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ։

Որակավորումների արժանահավատ շնորհում

9. Քարտեզագրել ուսումնառության արդյունքները՝ դրանց համար հստակեցնելով դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները և գործիքները։
10. Կազմակերպել կրթական ծրագրերի բենչմարքինգ համանման տեղական և միջազգային հաստատությունների հետ՝ բացահայտելու ուժեղ և թույլ կողմերը և տեղայնացնելու լավ փորձերը։
11. Մշակել մեխանիզմներ ուսանողների հաղորդակցական և ինքնաներկայացման հմտությունների զարգացման համար՝ ներառելով ստեղծագործությունների մեկնաբանման, բանավոր ներկայացման և քննարկման պարտադիր բաղադրիչներ։
12. Ապահովել պրակտիկայի օրագրերի և գնահատման գործիքների հստակեցում՝ տարբերակելով կատարողական և դասավանդման հմտությունների ձևավորման արդյունքները՝ ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը առավել ամբողջական գնահատելու համար։
13. Սահմանել ընթացիկ և ամփոփիչ գնահատման հստակ չափանիշներ՝ տարբերակելով գիտելիքի, հմտությունների և կարողությունների գնահատման բաղադրիչները և ապահովելով դրանց թափանցիկությունն ուսանողների համար։
14. Ներդնել դասախոսների գնահատման հստակ չափանիշներ (ուսանողների առաջընթաց, մեթոդների կիրառություն, ուսանողների ակտիվ ներգրավում), որոնք կծառայեն որպես հիմք խրախուսման և զարգացման ծրագրերի իրականացման համար։
15. Իրականացնել դասալսումների արդյունքների պարբերական վերլուծություն՝ ոչ միայն արձանագրելով խնդիրները, այլ նաև ամփոփելով ընդհանուր միտումները և դրանց հիման վրա մշակելով բարելավման գործողություններ։

16. Ըստ կրթական ծրագրերի առանձնահատկությունների՝ պլանավորել դասախոսների վերապատրաստումներ՝ ներառելով մեթոդական, մանկավարժական և գործնական նոր հմտություններ:
17. Մշակել պլանավորված քաղաքականություն մասնագիտական գրականության, երաժշտական գործիքների և տեխնիկական միջոցների համալրման համար՝ նվազեցնելով նվիրատվություններից կախվածությունը և ապահովելով կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսների պարբերական թարմացումը:
18. Նախաձեռնել դրամաշնորհային ծրագրերի և գործընկերային ֆինանսավորման ներգրավում, ինչպես նաև զարգացնել կարճաժամկետ դասընթացների առաջարկը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ապահովելու նպատակով:

Երկարաժամկետ զարգացում

19. Ներդնել շրջանավարտների հետագծի պարբերական մշտադիտարկման հստակ համակարգ (ավարտելուց 6 ամիս, 1 տարի, 3 տարի հետո)՝ արդյունքների հիման վրա իրականացնելով կրթական ծրագրերի վերանայումը և հիմք ընդունելով գործատուների պահանջները և շրջանավարտների զբաղվածության արդյունքները:
20. Ներդնել դասախոսների խրախուսման համակարգ՝ հետազոտական աշխատանքների իրականացման և դրանց արդյունքները կրթական գործընթացում կիրառելու և ուսանողների հետ համատեղ իրականացրած աշխատանքների համար:
21. Սահմանել հաշվետվությունների միասնական ձևաչափ՝ ներառելով ոչ միայն քանակական տվյալներ, այլև իրականացված գործընթացների վերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև բարելավման քայլերի ներկայացմամբ:
22. Սահմանել կայքի և ֆեյսբուքյան էջի բովանդակության թարմացման պարբերականություն և պատասխանատվության շրջանակ՝ ապահովելու քոլեջի գործունեության մասին ամբողջական տեղեկատվություն:
23. Սահմանել միջազգայնացման գործընթացից ակնկալիքները՝ հստակ ձևակերպելով նպատակները և սահմանելով պատասխանատուներ և չափելի ցուցիչներ:
24. Դասախոսների և ուսանողների՝ միջազգային մրցույթներին ու ծրագրերին մասնակցությունից հետո կազմակերպել փորձի փոխանակման միջոցառումներ՝ ձեռք բերած գիտելիքները և հմտությունները ներդնելու կրթական ծրագրերում:
25. Մշակել գործատուների ներգրավման համակարգված մեխանիզմներ՝ ոչ միայն դասավանդման, այլ նաև կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման գործընթացներում:
26. Գնահատել ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության մակարդակը և ըստ դրա պլանավորել լեզվահմացության մակարդակի բարելավման միջոցառումներ:

Գայանե Ավետիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

4-ը դեկտեմբերի, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գավառի արվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Գայանե Ավետիսյան՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, փորձագիտական խմբի ղեկավար:

Ելենա Մովսեսյան՝ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:

Աննա Մանասերյան՝ Երևանի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Վովա Արզումանյան՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈՒԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Գավառի արվեստի պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈՒԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈՒԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈՒԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

[1] **ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ**

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Գավառի արվեստի պետական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 2025 թ.-ի մայիսի 20-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։ Խմբում ներառված է եղել նաև ուսանող։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2025 թվականի սեպտեմբերի 11-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել Գավառի արվեստի պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2], ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել **2025 թ.-ի սեպտեմբերի 22-24-ն** ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսերի դիտարկում[4] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

[2] **ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
[3] **ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**
[4] **ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը հաստատվել է փորձագիտական խմբի բոլոր անդամների կողմից: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 2025 թ.-ի նոյեմբերի 18-ին: Քոլեջը դիտարկումներ և առարկություններ չի ներկայացրել զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ: Քոլեջի համապատասխան գրությունը ստանալուց հետո փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը:



Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

4-ը դեկտեմբերի, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Գավառի արվեստի պետական քոլեջի առաքելությունը ձևակերպված է 2023-2028 թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ), որը ռազմավարական ծրագիր մշակելու քոլեջի առաջին փորձառությունն է: Հարկ է նշել, որ մինչև 2024 թվականը քոլեջը կոչվել է «Գավառի պետական երաժշտական քոլեջ», իսկ 2024 թվականին վերանվանվել է Գավառի արվեստի պետական քոլեջ: Անվանափոխությունը հնարավորություն է տվել ընդգծելու քոլեջում ավելի վաղ ձևավորված գեղանկարչության մասնագիտական ուղղությունը և հաստատության նպատակադրումը՝ հետագայում ընդլայնել կրթական ծրագրերը արվեստի այլ ուղղություններով:

Քոլեջի առաքելությունն է՝ «մասնագիտական կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում գիտելիքի ստեղծման ու հմտությունների ձևավորման, փոխանցման ու տարածման, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորման միջոցով սեփական գործելակերպն ու որոշումներն ազգային շահերին համապատասխանեցման, կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների ու միջազգային փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ կրթական գործունեության իրագործում՝ ուղղված արվեստի ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը»: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի առաքելության ներկայիս ձևակերպումը չունի հստակ կապ կրթական ծրագրերի ուղղությունների և ակնկալվող արդյունքների հետ:

Միևնույն ժամանակ, առաքելության մեջ ընդգրկված ձևակերպումները չափազանց ընդհանրական են. օրինակ՝ չեն հստակեցվում «գիտելիքի ստեղծման» կամ «մարդասիրական արժեքների ապահովման» մեխանիզմները և դրանց սպասվող արդյունքները: Բացակայում է հստակեցումը, թե ազգային և միջազգային փորձի զուգակցումն ինչպես է արտացոլվելու ուսումնական գործընթացում՝ ապահովելու քոլեջի հիմնական գործառույթը՝ գեղարվեստի և երաժշտության ոլորտների մասնագետների պատրաստումը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտները միջին մասնագիտական կրթություն ստանալուց հետո հիմնականում որպես դասավանդողներ աշխատում են տարածաշրջանի արվեստի և երաժշտական դպրոցներում: Կարիերայի պատասխանատուի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2021-2024 ուսումնական տարիներին ավարտած 80 շրջանավարտների 60%-ն աշխատում է, որից 37.5%-ը՝ ըստ մասնագիտության: Միևնույն ժամանակ, շրջանավարտների 17.5%-ը շարունակում է ուսումը բուհերում, հիմնականում նույն մասնագիտությամբ՝ կրթությունը շարունակելով Որակավորումների ազգային շրջանակի հաջորդ՝ 6-րդ մակարդակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտները նաև բարձրագույն կրթություն ստանալուց հետո սկսում են դասավանդել քոլեջում՝ նպաստելով դասախոսական կազմի կայուն սերնդափոխությանը: 2025-2026 ուստարում քոլեջում

դասավանդում է 12 շրջանավարտ. նրանցից 7-ը քոլեջն ավարտելուց հետո ստացել են նաև բարձրագույն կրթություն:

Առաքելության և ռազմավարական նպատակների համադրությունից պարզ է դառնում, որ դրանց միջև առկա չէ հստակ պատճառահետևանքային կապ: Մասնավորապես՝ առաքելության առանցքային բաղադրիչներից մեկը՝ միջազգային փորձի կիրառումը, չի արտացոլվում հաստատության ռազմավարական նպատակներում և գործողությունների ծրագրում: Գործող նպատակները կենտրոնացած են ենթակառուցվածքային, մարդկային և ծրագրային բարելավումների վրա, որոնք կարևոր են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար, սակայն չեն բացահայտում դրանց ներդրումն առաքելության իրագործման մեջ:

Միևնույն ժամանակ, վերջին երեք տարիների ընթացքում քոլեջը ձեռնարկել է որոշակի քայլեր՝ սահմանված նպատակների ուղղությամբ: Մասնավորապես, ներգրավվել են պրակտիկ փորձառությամբ մասնագետներ, ապահովվել է սերնդափոխություն դասախոսական կազմում և բարելավվել են լսարանային ռեսուրսները: Այս գործողությունները վկայում են, որ հաստատությունը շարժվում է դեպի ռազմավարական նպատակների իրականացում, սակայն դեռ պահանջվում է ավելի հստակ ռազմավարական կապ առաքելության և նպատակների միջև:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ռազմավարական նպատակները հիմնականում նկարագրում են ցանկալի վիճակ («ձևավորել նպաստավոր միջավայր», «իրականացնել ստեղծագործական աշխատանքներ»)՝ առանց դրանց իրագործման չափելի արդյունքների սահմանման: Չեն նշվում հստակ ցուցիչներ, օրինակ՝ շրջանավարտների զբաղվածության տոկոսի աճ, միջազգային համագործակցությունների քանակի աճ կամ ուսանողների մասնակցությունը մշակութային նախաձեռնություններին:

Չնայած քոլեջն ունի «Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգ», ռազմավարական ծրագրի մշակման փուլում շահակիցների կարիքների համակարգված ուսումնասիրություն չի իրականացվել: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում իրականացված քննարկումները ցույց տվեցին, որ շահակիցները՝ հատկապես գործատուներն ու դասախոսները, հստակ գիտակցում են քոլեջի դերը որպես տարածաշրջանում արվեստի ուղղությամբ դասավանդողներ պատրաստող միակ հաստատություն:

Գործատուների արձագանքների հիման վրա քոլեջը նախաձեռնել է պարի ուղղությամբ նոր կրթական ծրագրի ներդրման գործընթաց: Թեև նախաձեռնությունն առայժմ չի իրականացվել տարածքային սահմանափակումների պատճառով, այն վկայում է, որ քոլեջը հասկանում է համայնքի պահանջները և փորձում է ընդլայնել իր առաքելությունը՝ պահպանելով ոլորտային ուղղվածությունը:

Քոլեջը փաստացի արձագանքում է շահակիցների ակնկալիքներին, սակայն առաքելության իրագործման գործընթացում բացակայում է կարիքների ուսումնասիրության պարբերական և կառուցվածքային մոտեցումը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Ռազմավարական ծրագրի գնահատման մեխանիզմներ քոլեջը չի ներդրել: Նպատակների իրականացման ժամկետները սահմանված են ՌԾ ամբողջ ժամանակահատվածի (2023-2028թթ.) համար՝ առանց միջանկյալ գնահատման հստակ պլանավորման: Չկան գնահատման ցուցիչներ, որոնք թույլ կտան հետևել առաջընթացին և տարբերակել՝ սահմանված գործընթացներից որոնք են իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ձեռնարկել է ռազմավարական պլանավորման գործընթաց և սահմանել զարգացման հիմնական

ուղղություններ: Առաքելության վերանայման ընթացքում նպատակահարմար է հստակեցնել, թե արվեստի ոլորտի որ ճյուղերի (երաժշտություն, կերպարվեստ, պար և այլն) զարգացմանն է քոլեջը պատրաստվում նպաստել, որպեսզի կրթական առաջարկը լինի ռազմավարական ուղղվածության մեջ և ամբողջությամբ ծառայի մրցունակ մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ռազմավարական նպատակների իրականացման ընթացքը պետք է ունենա հստակ գնահատման մեխանիզմներ: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել միջանկյալ ժամկետներ, առաջընթացի չափելի ցուցիչներ և պարբերական հաշվետվությունների համակարգ, ինչը թույլ կտա քոլեջին հետևել ռազմավարական ծրագրի իրագործման դինամիկային, գնահատել գործողությունների արդյունավետությունը և ժամանակին ուղղել շեղումները: Սա կնպաստի կառավարման գործընթացների կանխատեսելիության և փաստահենք որոշումների կայացման մշակույթի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև շահակիցների՝ ուսանողների, դասախոսների և գործատուների ներգրավումը քոլեջի ռազմավարական պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում: Շահակիցների կարիքների պարբերական վերհանումը և վերլուծությունը հնարավորություն կտան քոլեջին ճշգրտել կրթական առաջարկը՝ այն առավել համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և համայնքի մշակութային առանձնահատկություններին: Սա կնպաստի որոշումների հիմնավորմանը և ռազմավարական նպատակների իրականացման ավելի համակարգված կազմակերպմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր որդեգրած առաքելության շրջանակում իրականացնում է ոլորտային և տարածաշրջանային պահանջներին համահունչ կրթական ծրագրեր, որոնք դիմորդներին հնարավորություն են տալիս ստանալու միջին մասնագիտական կրթություն արվեստի բնագավառում, գործատուները կարևորում են քոլեջի դերն ու առաքելությունը համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով արվեստի ու երաժշտական դպրոցներն ապահովելու գործում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Գավառի արվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ տնօրենի և Կառավարման խորհրդի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շուրջ մեկ տարի է՝ քոլեջի տնօրենի պարտականությունները կատարում է ուսումնական գծով փոխտնօրենը: Քոլեջը պարբերաբար՝ գրեթե երկու ամիսը մեկ անգամ, հայտարարել է տնօրենի պաշտոնի համալրման համար մրցույթ, սակայն մրցույթը չի կայացել և ներկայումս պաշտոնը դեռևս թափուր է: Եվս մեկ մրցույթ նախատեսվում է առաջիկայում: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ այս հանգամանքը չի խոչընդոտել

ուսումնական գործընթացի իրականացմանը, դասընթացներն ու կազմակերպադաստիարակչական աշխատանքները շարունակվել են ընթանալ բնականոն կերպով:

Խորհուրդը կատարում է օրենքով սահմանված իր հիմնական գործառույթները՝ բյուջեի, կանոնակարգերի և կառավարման փաստաթղթերի հաստատման ուղղությամբ: Այնուամենայնիվ, խորհրդի գործունեությունը դեռևս չի զարգացել ռազմավարական խորհրդատվական ուղղությամբ, ինչը կարող է քոլեջի զարգացման ուղղությունների շուրջ ձևավորել երկարաժամկետ քննարկումներ և ապահովել տարբեր շահակիցների մասնակցությունը:

Խորհուրդը կարող է առավել արդյունավետ դեր ունենալ, եթե նման նախաձեռնությունները՝ օրինակ պարի կամ դիզայնի կրթական ծրագրերի ներդրման հարցը, դիտարկվեն ոչ թե որպես առաջարկ, այլ որպես ռազմավարական ուսումնասիրության առարկա՝ հիմնավորված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատմամբ:

Քոլեջում գործում են նաև Մանկավարժական և Տնօրինական խորհուրդները, որտեղ քննարկվում են ուսումնական գործընթացին վերաբերող հարցերը, որոնց վերաբերյալ վերջնական որոշումները կայացվում են Կառավարման խորհրդում:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքը վերանայվել է 2024 թվականին: Նոր կառուցվածքում ավելացվել են Որակի ապահովման բաժինը և բուժկետը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Կառուցվածքում առկա որոշ ստորաբաժանումներ և հաստիքներ համալրված չեն, ինչպես օրինակ Ուսումնական մաս, Արխիվ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի համալրել այս հաստիքները, սակայն կառուցվածքը վերանայելիս համապատասխան փոփոխությունը չի իրականացրել: Կառուցվածքում արտացոլված են ստորաբաժանումների միջև ուղղահայաց կապերը և ենթակայությունները: Քոլեջի կառուցվածքում և ստորաբաժանումների պլաններում տեսանելի չեն ստորաբաժանումների միջև առկա հորիզոնական կապերը և համագործակցությունը: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր ուղղությունների պատասխանատուները (բաժինների վարիչներ, Կարիերայի և որակի պատասխանատուներ, Ուսանողական խորհուրդ) համագործակցում են համատեղ միջոցառումներ կազմակերպելու, տվյալներ փոխանակելու (կարիերայի պատասխանատուի կողմից շրջանավարտների տվյալների փոխանում ՈՒԱ պատասխանատուին հարցումների անցկացման համար) հարցերում: Սա վկայում է համագործակցության մշակույթի առկայության, բայց ոչ ինստիտուցիոնալացված կառավարման համակարգի ձևավորման մասին:

Քոլեջի աշխատակիցների գործառույթներն ամրագրված են պաշտոնի նկարագրերում և աշխատանքային պայմանագրերում: Քոլեջը նախաձեռնել է պաշտոնական վեբ կայքի ստեղծումը և կարևորում է պատասխանատուի նշանակումը կայքի պարբերական համալրման համար: Սակայն դեռ որոշված չէ՝ դրա համար կստեղծվի նոր հաստիք, թե՞ պարտականությունները կվստահվեն արդեն գործող աշխատակիցներից մեկին:

Անդրադառնալով կրթական ծրագրերի կառավարման գործառույթներին՝ հարկ է նշել, որ քոլեջը, ըստ կրթական ծրագրերի ուղղությունների, առանձնացրել է բաժիններ և նշանակել բաժինների վարիչներ: Սակայն կրթական ծրագրերի պատասխանատվությունը՝ դրանց մշակման ու վերանայման գործընթացների համակարգումը, այս պահին դեռևս հստակ ամրագրված չէ բաժնի վարիչների գործառույթներում:

Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: 2024 թվականին քոլեջի եկամուտների հիմնական մասը ձևավորվել է պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից՝ 98.14%, մինչդեռ

ուսման վարձավճարները կազմել են ընդամենը 1.86%։ Արդյունքում, հաստատությունը գրեթե ամբողջությամբ կախված է պետական միջոցներից։

Քոլեջի ծախսերի ուղղությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատավարձերի բաժինն աննշան նվազել է՝ 2022–2023թթ. 93.5%-ից 2024-2025 ուստարում հասնելով մինչև 92.19%։ Կրթաթոշակների ծախսերը նույնպես կրճատվել են՝ 2022թ.-ի 4.10%-ից 2024-2025 ուստարում հասնելով մինչև 3.06%։ Գործուղումների ծախսերը գրեթե զրոյացել են՝ 0.04%-ից նվազելով մինչև 0.0076%։

Միևնույն ժամանակ, նկատվում է աճ մի քանի ուղղություններով։ Այսպես օրինակ, ծառայությունների ձեռքբերման ծախսերը բարձրացել են՝ 0.23%-ից մինչև 0.51%, ռեսուրսների պահպանման ծախսերը կրկնապատկվել են՝ 0.09%-ից մինչև 0.16%, տնտեսական ծախսերը 1.83%-ից 2024-2025 ուստարում հասել են 3.50%-ի։

Բացի այդ, 2024թ.-ին առաջին անգամ արձանագրվել են սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր՝ 0.18%՝ կարևորելով նոր երաժշտական գործիքների ձեռքբերումը։

Այսկերպ, փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ թեև ծախսերի հիմնական մասը շարունակում են կազմել աշխատավարձերն ու կրթաթոշակները, դրանց բաժինն աստիճանաբար նվազում է։ Փոխարենը մեծանում են օժանդակող ուղղությունները՝ ծառայություններ, ռեսուրսների պահպանում ու հատկապես տնտեսական ծախսեր։ Այս միտումները ցույց են տալիս, որ քոլեջի ֆինանսական քաղաքականությունը դեռևս կենտրոնացած է հիմնական ծախսերի ապահովման վրա, սակայն որոշակի քայլեր են արվում նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ։ Միևնույն ժամանակ, ֆինանսավորման կառուցվածքը և պետական միջոցների գերակշռությունը սահմանափակում են հաստատության ինքնուրույնությունը՝ երկարաժամկետ զարգացման նախաձեռնությունների և կրթական ծրագրերի դիվերսիֆիկացման հնարավորությունների տեսանկյունից։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ըստ ռազմավարական զարգացման ուղղությունների՝ ֆինանսների բաշխում քոլեջը դեռևս չի իրականացնում և ֆինանսներ չի հատկացրել երկարաժամկետ զարգացմանն ուղղված (դասախոսական կազմի կարողությունների շարունակական զարգացում, հետազոտության խթանում, ենթակառուցվածքների վերազինում) գործընթացների պլանավորման համար։

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ՝ տարեկան կարճաժամկետ պլանավորումներով։ ԳԱՊՔ-ն առաջնորդվում է 2023-2028թթ. համար մշակված երկարաժամկետ ՌԾ-ով։ Անդրադառնալով ՌԾ-ին կից պլան-ժամանակացույցում առկա ակնկալվող արդյունքներին՝ հարկ է նշել, որ պլանում սահմանված նպատակ-գործողություն-ակնկալվող արդյունք շղթան կապակցված չէ։ Այսպես օրինակ, «Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում» նպատակի համար ակնկալվող արդյունք է սահմանված «Վարչական անձնակազմի պաշտոնների նկարագրերի առկայությունը»։ Որոշ նպատակների համար (օրինակ՝ քոլեջի դահլիճի վերանորոգում, գործողություն՝ իրականացնել քոլեջի դահլիճի վերանորոգման աշխատանքներ) ակնկալվող արդյունքներ սահմանված չեն։ Պլան-ժամանակացույցում նշված են նաև գործողությունների ժամկետները, որոնք սակայն նշված են ամբողջ ՌԾ-ի համար՝ 2023-2028թթ., ինչի արդյունքում տեսանելի չեն ակնկալվող արդյունքների ձեռքբերման միջանկյալ ժամկետները։ Անդրադառնալով պատասխանատվությունների բաշխմանը՝ հարկ է նշել, որ պլաններում հստակ չէ նաև պարտականությունների բաշխումը, այսպես օրինակ «Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության համար» նպատակի համար պատասխանատու է միայն տնօրենը և այլն։

Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Վերջին երեք տարիների պլանների դիտարկումը ցույց տվեց, որ ըստ տարիների պլանները կրկնվում են: Պլաններում ներկայացված են պատասխանատուների աշխատանքային գործառույթներից բխող գործողությունները (բաց դասերի կազմակերպում, համերգներ, նիստերի կազմակերպում և անցկացում)՝ առանց կապակցելու ռազմավարական ծրագրին:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է հաշվետվությունները: Քոլեջը կազմել է «Հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց», որտեղ տրված են թե՛ արտաքին, թե՛ ներքին հաշվետվությունների ներկայացման ժամկետները, պատասխանատուները և թե՛ ում պետք է ներկայացվեն դրանք: Անհրաժեշտ է նշել, որ տնօրենի և ստորաբաժանումների վերջին երեք տարիների հաշվետվությունները կրկնվում են և հիմնականում տեղեկություններ են տալիս ուսանողների շարժընթացի, կատարված աշխատանքների մասին՝ առանց վերլուծության, բարելավման գործողությունների պլանավորման:

Անդրադառնալով քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրմանը՝ հարկ է նշել, որ արտաքին գործոնների վերաբերյալ որոշ ազդակներ հաստատությունը ստանում է գործատուների և շրջանավարտների հետ քննարկումների, հարցումների արդյունքում, ինչպես օրինակ արվեստի ուղղությամբ նոր կրթական ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը: Ներքին գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է հարցումների միջոցով, որոնց միջոցով վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են նյութատեխնիկական բազայի արդիականացմանը: Միևնույն ժամանակ, քոլեջում դեռևս հստակեցված չէ, թե կառավարման համար ինչ տվյալներ են համարվում առաջնային և ինչ ձևաչափով պետք է դրանք հավաքագրվեն: Արդյունքում որոշումների կայացումը հաճախ հիմնվում է ընթացիկ արձագանքների վրա՝ առանց վերլուծական տվյալների համադրման: Սա սահմանափակում է կառավարման կանխատեսելիությունը և խոչընդոտում հիմնավորված որոշումների մշակումը:

Քոլեջում կառավարման և վարչարարության գործընթացներում դեռևս չի ներդրվել ՊԻԳԲ սկզբունքը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործընթացների գնահատում և դրա հիմքով բարելավման գործընթացների պլանավորում դեռևս տեղի չի ունենում:

Քոլեջը տեղեկատվության հրապարակման համար կիրառում է ֆեյսբուքյան էջը, որտեղ հրապարակվում է ընթացիկ տեղեկատվություն միջոցառումների, համերգների, փառատոների, ուսումնական գործընթացի, շրջանավարտների մասնագիտական հաջողությունների մասին: Կանոնակարգերի և փաստաթղթերի հրապարակումը նախատեսվում է իրականացնել նորաստեղծ պաշտոնական կայքում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դեռևս հստակեցված չեն տեղեկատվության հրապարակման ուղղությունները և նպատակները: Հաստատությունը չի ներդրել նաև հրապարկվող տեղեկատվության արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝գնահատելու օրինակ շրջանավարտների հաջողության պատմությունների մասին իրազեկումն ինչպես է բարձրացրել քոլեջի գրավչությունն ապագա դիմորդների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ Գավառի արվեստի պետական քոլեջը ձևավորել է կառավարման համակարգ, որն ապահովում է հաստատության գործունեության օպերացիոն շարունակական կառավարումը: Գործում են միանձնյա և կոլեգիալ

կառավարման մարմիններ՝ Կառավարման, Տնօրինական և Մանկավարժական խորհուրդներ, որոնք ներգրավված են որոշումների ընդունման գործընթացում: Այս կառուցվածքը ստեղծում է կայուն հիմք կառավարման մշակույթի հետագա զարգացման համար:

Միևնույն ժամանակ, խորհրդի գործունեությունը սահմանափակվում է վերահսկողական և ընթացիկ հաստատման գործառույթներով: Ռազմավարական նախաձեռնությունների մշակման, զարգացման նոր ուղղությունների քննարկման և ռեսուրսների կառավարման հարցերում խորհուրդը հանդես չի գալիս որպես նախաձեռնող մարմին: Խորհրդի դերակատարությունը կարող է դառնալ ավելի ռազմավարական, եթե այն ձևավորի պարբերական քննարկումների հարթակ, որտեղ նոր կրթական ծրագրերի ներդրման հարցերը կդիտարկվեն իրագործելիության ուսումնասիրությունների հիման վրա:

Քոլեջը մշակել է կառավարման գործընթացները կարգավորող մի շարք կանոնակարգեր, որոնք ապահովում են կառավարման համակարգվածությունը, սակայն գործընթացների գնահատում և բարելավման պլանավորում չի իրականացվում: ՊԻԳԲ սկզբունքի (պլանավորում–իրականացում–գնահատում–բարելավում) ներդրումը կառավարման բոլոր մակարդակներում կնպաստի գործընթացների չափելիությանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Կազմակերպական կառուցվածքի վերանայումը դրական հիմք է կառավարման զարգացող համակարգի համար: Սակայն ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերի ամրապնդումը և թափուր հաստիքների համալրումն անհրաժեշտ են կառավարման համակարգի ամբողջականության ապահովման համար: Բաժինների վարիչների դերերի հստակեցումը՝ մասնավորապես կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում, կնպաստի որակի ներքին ապահովման համակարգի կայունացմանը:

Ռազմավարական և տարեկան պլանների միջև կապը ներկայում թույլ է: Նպատակ–գործողություն–արդյունք շղթայի հստակեցումը և միջանկյալ ժամկետների սահմանումը թույլ կտան հետևել առաջընթացին և գնահատել պլանների իրականացումը: Պլանավորման փաստաթղթերի համաչափեցումը կառավարման հաշվետվությունների հետ կնպաստի արդյունահենք որոշումների մշակմանը:

Ֆինանսական կառավարման ոլորտում քոլեջը գրեթե ամբողջությամբ կախված է պետական ֆինանսավորումից, իսկ սեփական եկամուտների բաժինը աննշան է: Ֆինանսական քաղաքականության վերանայումը՝ ներառելով ռեսուրսների նպատակային բաշխման, այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ներգրավման և երկարաժամկետ զարգացման պլանավորման մեխանիզմներ, կնպաստի հաստատության ֆինանսական կայունության և ինքնուրույնության բարձրացմանը:

Քոլեջն արտաքին ազդակներ ստանում է շրջանավարտների և գործատուների հետ համագործակցության միջոցով, սակայն տվյալների հավաքագրման համակարգը դեռևս ինստիտուցիոնալ բնույթ չունի: Տվյալահենք որոշումների մշակման համար անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ տվյալներ են անհրաժեշտ կառավարման համար և ինչպես պետք է դրանք վերլուծվեն՝ ապահովելու հիմնավորված որոշումներ:

Տեղեկատվության թափանցիկությունը ներկայում ապահովվում է հիմնականում սոցիալական հարթակներով: Կայքէջի գործարկումը կարող է դառնալ կառավարման թափանցիկության և հաշվետվողականության կարևոր գործիք, եթե մշակվի տեղեկատվության հրապարակման հստակ քաղաքականություն և գնահատվի դրա արդյունավետությունը շահակիցների իրազեկության և քոլեջի հանրային տեսանելիության վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ռազմավարական պլանավորման և իրականացման գործընթացները լիարժեք չեն ապահովում արդյունահենք կառավարում, երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում ակնկալվող արդյունքները հաճախ ձևակերպված կամ չափելի չեն, կազմակերպական կառուցվածքում հորիզոնական կապերը տեսանելի չեն, պլանավորման և հաշվետվությունների միջև կապը թույլ է, ռազմավարական նպատակների իրականացման համար սահմանված գործողությունները չեն կապակցվում ակնկալվող արդյունքներին, հաշվետվությունները հիմնականում նկարագրական են և չունեն վերլուծական հիմք, ֆինանսական ռեսուրսների բաշխումը չի արտացոլում քոլեջի զարգացման ուղղությունները, կառավարման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը սահմանված և ինստիտուցիոնալացված չէ, որոշումների կայացումը բավարար չափով հիմնված չէ հավաքագրված ու վերլուծված տվյալների վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Գավառի արվեստի պետական քոլեջը Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համահունչ իրականացնում է միջին մասնագիտական երեք կրթական ծրագիր՝ Գործիքային կատարողական արվեստ՝ ըստ գործիքների տեսակների (դաշնամուր, շվի, դուդուկ, դհոլ, քանոն, որակավորումը՝ երաժշտական գործիքի կատարող, դասավանդող), Երգեցողություն (որակավորումը՝ երգիչ-կատարող) և Գեղանկարչություն (որակավորումը՝ նկարիչ-դասավանդող): Քոլեջում ներկայումս կրթություն է ստանում 107 ուսանող: Կրթությունն իրականացվում է առկա ուսուցմամբ:

ԳԱՊՔ-ում մոդուլային ուսուցմամբ ՄԿԾ-ները ներդրվել են «Երգեցողություն», «Գեղանկարչություն» մասնագիտություններում 2021-2022 ուսումնական տարվանից, իսկ 2022-2023 ուսումնական տարվանից՝ «Գործիքային կատարողական արվեստ» բաժնում: Կրթական ծրագրերի մշակման համար քոլեջն աշխատաշուկայի առանձին վերլուծություններ չի իրականացրել և առանձին կրթական ծրագրեր չի մշակել: Դրանք ամբողջովին հիմնված են Պետական կրթական չափորոշիչների վրա:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսները, հիմք ընդունելով Պետական կրթական չափորոշիչները, մշակում են իրենց մոդուլային նկարագրերը՝ շեշտադրելով գործնական և կատարողական հմտությունների ձևավորումը: ՄԿԾ-ներում վերանայվել են ուսումնական պլանները, տեսական և գործնական դասընթացներին հատկացված ժամաքանակները, ուսուցման և գնահատման մեթոդները, մոդուլի կատարման չափանիշները, մուտքային պահանջները և այլն: Ուսումնական պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ավելացվել են գործնական ժամերը ուսանողների կատարողական հմտությունների զարգացման համար. գործնական աշխատանքների ծավալը շուրջ 68% է կրթական ծրագրերում՝ նպատակ ունենալով պատրաստել պրակտիկ կարողություններ ունեցող

մասնագետներ։ Ուսումնական պլաններում իրականացվել են նաև մոդուլների դասավանդման կիսամյակային փոփոխություններ. այսպես «Գեղանկարչություն» կրթական ծրագրում «Մանկավարժություն» և «Դասավանդման մեթոդիկա» մոդուլները տեղափոխվել են երկրորդ և երրորդ կուրսերից՝ երրորդ և չորրորդ կուրսեր։ Այս փոփոխությունը թույլ է տվել ապահովել մոդուլների տրամաբանական կապը մանկավարժական պրակտիկայի իրականացման հետ, ստեղծել հնարավորություն, որ ուսանողները մոդուլներում ստացած գիտելիքները անմիջապես կիրառեն պրակտիկայում և մոդուլների ավարտին պատրաստ լինեն պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսումնական պլաններում ամրագրված նախասիրական և ընտրովի առարկաներ չեն իրականացվում քոլեջում։

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ հաշվի առնելով ուսանողների՝ մուտքային տարբեր մակարդակների առկայությունը՝ դասավանդողներն ուսուցման գործընթացը մեկնարկելիս սկսում են նվազագույն մակարդակից՝ ապահովելու սահմանված ուսումնառության արդյունքների ձեռքբերումը և ուսանողների կարողությունների աստիճանական զարգացումը (մեկնարկելով նոտագրության հիմունքներից՝ բավարարելու սոլֆեջիոյի իմացության նվազագույն պահանջները)։ Դասալսումներից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող առաջադրանքները կազմվում են պարզից բարդացման (օրինակ՝ «Գեղանկարչություն» կրթական ծրագրի պարագայում երկրաչափական մարմնից մինչև բնորդի պատկերում) սկզբունքով՝ պահպանելով ուսումնական ծրագրերի տրամաբանությունը, ինչպես նաև հաշվի առնելով ուսանողների անհատական կարողությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստեղծագործությունների ցանկը սահմանելիս ևս հաշվի են առնվում ուսանողների կարողությունները (օրինակ՝ «Երգեցողություն» կրթական ծրագրի պարագայում՝ ձայնածավալ, տարիքային առանձնահատկություններ)։

Կրթական ծրագրերում առկա միջառարկայական կապերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Գեղանկարչություն» կրթական ծրագրում «Պլաստիկ անատոմիա» մոդուլի ուսուցումը ստեղծում է հիմնավոր հիմք հատուկ մասնագիտական մոդուլների ուսուցման համար։ Այսպես ուսանողները ձեռք են բերում մարդու մարմնի կառուցվածքի խորքային պատկերացում, այդ գիտելիքներն ինտեգրվում են «Գծանկարչություն», «Գեղանկարչություն» և «Կոմպոզիցիա» մոդուլների մեջ, արդյունքում ուսանողները կարողանում են առավել ճշգրիտ իրականացնել բնորդի պատկերումը։

Քոլեջը համագործակցում է տարածաշրջանում գործող երաժշտական, արվեստի դպրոցների և կենտրոնների հետ պրակտիկաների կազմակերպման նպատակով։ «Ժողովրդական գործիքներ» և «Դաշնամուր» ծրագրերում ուսանողները 5-8-րդ կիսամյակներում անցնում են մանկավարժական, կատարողական և երաժշտատեսական պրակտիկաներ, որոնք հնարավորություն են տալիս համադրել տեսական գիտելիքը (սոլֆեջիո, հարմոնիա) բեմական և դասավանդման հմտությունների հետ։ «Երգեցողություն» ծրագրում ուսումնական պրակտիկան ներառված է 2–8-րդ կիսամյակներում։ «Գեղանկարչություն» ծրագրում ուսումնական պրակտիկան 2-8-րդ կիսամյակներում իրականացվում է տեսական և գործնական բաղադրիչների զուգակցմամբ, իսկ 10-րդ կիսամյակում կազմակերպվում է նախաավարտական պրակտիկա, որը կապվում է պետական ամփոփիչ ատեստավորման քննության հետ։ Հաշվի առնելով տարածաշրջանի կարիքները և երգի ուսուցիչների բացակայությունը՝ քոլեջը «Երգեցողություն» կրթական ծրագրի պարագայում ևս կազմակերպում է ուսանողների այցեր դպրոցներ՝ հնարավորություն տալով ուսանողներին ծանոթանալ դասավանդման մեթոդներին։ Այս համատեքստում քոլեջի ուսանողների զբաղվածության վերջին չորս տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս,

որ շրջանավարտների 37.5%-ը աշխատում են մասնագիտությամբ, նրանց մեծ մասը՝ մարզի երաժշտական, արվեստի դպրոցներում՝ որպես դասավանդողներ։

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում հստակեցված չեն դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ նշելով տեսական, գործնական, բացատրական մեթոդներ։ Փորձագիտական խմբի կողմից իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսները կիրառում են տարբեր մեթոդներ՝ ելնելով կոնկրետ դասընթացի բովանդակությունից, ուսանողների խմբի առանձնահատկություններից և ուսումնական թեմայի բարդությունից։ Այս անհատական մոտեցումը որոշ դեպքերում ապահովում է ուսանողակենտրոն ուսուցում՝ հաշվի առնելով ուսանողի անհատական կարողությունները, սակայն միևնույն ժամանակ առկա չեն միասնական մոտեցումներ և համակարգված քաղաքականություն մեթոդների ընտրության, առաջադրանքների տրամադրման հարցում։

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը՝ հետազոտությունը համարելով ստեղծագործական գործունեության անբաժան մաս։ Այսպես օրինակ, «Գեղանկարչություն» կրթական ծրագրում յուրաքանչյուր կոմպոզիցիոն առաջադրանք իրականացվում է հետազոտական բաղադրիչով. ուսանողները նախ կատարում են թեմայի պատմական ակնարկ, ուսումնասիրում կիրառվող մեթոդները և տեխնիկաները, այնուհետև միայն անցնում գործնական իրականացմանը։ Այս մոտեցումը հնարավորություն է տվել ուսանողներին զարգացնել վերլուծական և ստեղծագործական կարողությունները և կոմպոզիցիաների ձևավորումն իրականացնել հիմնավորված ուսումնասիրության հիման վրա։ Անդրադառնալով «Գործիքային կատարողական արվեստ» կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչի ներդրմանը՝ կարելի է նշել, որ հետազոտությունը կապվում է երաժշտական գործերի ուսումնասիրության և մեկնաբանման հետ։ Ուսանողները նախ ուսումնասիրում են տարբեր հեղինակների ստեղծագործություններ, կատարում համեմատական վերլուծություն՝ լսելով տարբեր կատարումներ, բացահայտում են կատարողական առանձնահատկությունները և միայն դրանից հետո մշակում սեփական մեկնաբանությունը։ Այս մոտեցումը նպաստում է ուսանողների լսողական ու վերլուծական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ձևավորում է կատարողականությունը։

Ամփոփիչ ատեստավորման նպատակով «Գեղանկարչություն» կրթական ծրագրի պարագայում ուսանողներն իրականացնում են ավարտական աշխատանքներ։ Ուսանողները ներկայացնում են վերջնական կտավը, կից թղթապանակը, որը ներառում է թեմայի վերլուծություն, աշխատանքի մեկնաբանություն, էսքիզներ (գծանկարչական, գունանկարչական), որոնք ամբողջական պատկեր են ձևավորում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի մասին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերլուծական, հետազոտական աշխատանքների իրականացման պահանջներ և դրանց գնահատման համար հստակ սահմանված չափանիշներ դեռևս առկա չեն։ Ուսանողների աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք տարբեր կառուցվածք ունեն, հստակեցված չեն հղումները համապատասխան մասնագիտական գրականությանը (շատ դեպքերում հղում կատարելով Wikipedia.am-ին), առկա չեն եզրահանգումներ։ Պայմանավորված օտար լեզվի իմացության անբավարար մակարդակով՝ ուսանողներն իրենց վերլուծություններն իրականացնում են հիմնականում հայալեզու աղբյուրների ուսումնասիրմամբ։

Անդրադառնալով ուսանողների հաղորդակցական և փափուկ հմտությունների զարգացմանը՝ հարկ է նշել, որ կրթական ծրագրերում ներդրված է «Հաղորդակցություն» մոդուլը։ Այսուհանդերձ, մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողները հաճախ

դժվարանում են իրենց կատարած ստեղծագործությունները ներկայացնել և մեկնաբանել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ ուսանողները կիրառում են նաև տեխնիկական միջոցներ իրենց մասնագիտական խնդիրները լուծելու համար. այսպես օրինակ «Գեղանկարչություն» կրթական ծրագրի պարագայում ուսանողները փորձել են կիրառել պլանշետներն անիմացիա ստանալու նպատակով: Հարկ է նշել, որ նման դեպքերը դեռևս լայն տարածում չունեն քոլեջում, և տեխնիկական միջոցների կիրառումը կրթական ծրագրերում որպես պարտադիր բաղադրիչ ներդրված չէ:

Քոլեջում 2023թ. հաստատվել է «Ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման, գնահատման և բողոքարկման կարգը», որն ապահովում է գնահատման գործընթացների իրավական հենքը և ուսանողների իրավունքների պաշտպանությունը: Սակայն կարգում սահմանված են միայն ընդհանուր գնահատման ձևեր (բանավոր, գրավոր, գործնական քննություններ), առանց արվեստի բնագավառի համար բնորոշ ձևաչափերի ներառման, ինչպիսիք են լսումները, փակ երեկոները կամ բեմական դիտումները:

Գնահատման գործընթացում կիրառվում է «Անցել է / Չի անցել» համակարգը, որը թույլ է տալիս ֆիքսել մոդուլի յուրացման փաստը, սակայն չի ապահովում ուսանողի առաջընթացի աստիճանական արձանագրում և տարբերակված հետադարձ կապ: Մասնագիտական քննարկումների և դասալսումների արդյունքում պարզ է դարձել, որ դասախոսներն անհատական մակարդակում ապահովում են ձևավորող գնահատում՝ ուղղորդելով ուսանողներին և օգնելով հմտությունների զարգացմանը: Այս մոտեցումը խթանում է ուսանողակենտրոն ուսուցումը, սակայն այն դեռևս չի ձևակերպվել որպես միասնական քաղաքականություն:

Գեղանկարչության ծրագրում կիրառվող գնահատման չափանիշները մասամբ հստակեցված են՝ ներառելով կոմպոզիցիոն և տեխնիկական սկզբունքներ (պատկերի համաչափություն, տարածական լուծումներ, լույսի և ստվերի հավասարակշռություն), ինչը ձևավորում է մասնագիտական գնահատման կայուն մոտեցում: Երաժշտական մասնագիտություններում գնահատման չափանիշները դեռևս սահմանված չեն նույն հստակությամբ. ձայնի որակը, տեխնիկական վարպետությունը, արտահայտչականությունը և բեմական վարքագիծը չեն ունենում գնահատման կշռված արտացոլում, ինչն առաջացնում է գնահատման ենթակա չափանիշների սուբյեկտիվ ընկալման ռիսկ:

2024թ.-ից քոլեջում ներդրվել է «Մանկավարժական պրակտիկայի կանոնակարգը», որտեղ նշված են պրակտիկայի նպատակները և գնահատման ընդհանուր սկզբունքները: Պրակտիկայի գնահատումը հիմնականում հիմնվում է ուսանողների ներկայության և ակտիվության վրա, մինչդեռ պրակտիկայի ընթացքում ձևավորված մասնագիտական և դասավանդման հմտությունները չեն ստանում հստակ որակական գնահատում: Դաշնամուրի ծրագրում ներդրված օրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողների գրառումները նկարագրական են և չեն արտացոլում հմտությունների ձեռքբերման մակարդակը կամ առաջընթացը:

Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է պետական ավարտական քննությունների ձևաչափով՝ գեղանկարչության դեպքում ավարտական աշխատանքի պաշտպանությամբ, երաժշտական ծրագրերի դեպքում՝ ելույթով: Սակայն գնահատման չափանիշները և արդյունքների գրանցման մեխանիզմները հստակեցված չեն, ինչն առաջացնում է գնահատման թափանցիկության և համեմատելիության բացեր:

Չնայած քոլեջում գործում է գնահատման բողոքարկման կարգ, փորձագիտական այցի ընթացքում բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել: Անհամաձայնության դեպքերում ուսանողները դիմում են դասախոսին՝ ստանալու կրկնակի փորձարկման հնարավորություն, ինչը

վկայում է ուսանող-դասախոս փոխադարձ վստահության մշակույթի ձևավորման մասին, սակայն նաև մատնանշում է բողոքարկման մեխանիզմի պասիվ գործառույթը։

Ակադեմիական ազնվությանն անդրադառնալով՝ հարկ է նշել, որ քոլեջը կարևորում է ուսանողների կողմից ընտրված թեմաների ինքնուրույնությունը և աշխատանքների յուրօրինակությունը։ Այսուհանդերձ, քոլեջում դեռևս ներդրված չեն գրագողության կանխարգելման, հավաստի աղբյուրներից օգտվելու և դրանց հղումներն աշխատանքներում ներկայացնելու մեխանիզմներ։

Քոլեջում կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացվել. դրանք չեն համեմատվել ոչ տեղական, ոչ էլ միջազգային համանման ծրագրերի հետ։ Կրթական ծրագրերը հիմնված են միայն պետական կրթական չափորոշիչների վրա՝ առանց համեմատական վերլուծության կամ լավ փորձի տեղայնացման գործընթացների։ Հիմք ընդունելով Մասնագիտական կրթության և ուսուցման մասին օրենքով քոլեջներին տրված հնարավորությունն իրենց կրթական ծրագրերը մշակելու ուղղությամբ՝ փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի նախաձեռնում սեփական կրթական ծրագրերը մշակելու գործընթաց։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում փոփոխությունները կատարվում են հիմնականում չափորոշիչների փոխվելու դեպքում։ Աշխատաշուկայի արձագանքների հիման վրա կատարված փոփոխությունների օրինակներ առկա չեն։ Քոլեջը դեռևս չի իրականացրել նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերլուծություն։ Հաշվետվությունների դիտարկումից պարզ դարձավ, որ դրանք չեն պարունակում ուսանողների կատարած աշխատանքների, ելույթների, կատարողական կարողությունների վերաբերյալ վերլուծություն, բացակայում են զարգացմանն ուղղված առաջարկությունները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գավառի արվեստի պետական քոլեջի մոդուլային կրթական ծրագրերը կառուցված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա և ներառում են գործնական բաղադրիչի մեծ բաժին՝ նպաստելով ուսանողների կատարողական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը։ Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի ամբողջականությունը և դրանց համապատասխանությունը քոլեջի առաքելությանը կարող են էականորեն բարձրանալ, եթե իրականացվի ուսումնառության արդյունքների ամբողջական քարտեզագրում՝ յուրաքանչյուր արդյունքի համար հստակեցնելով դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու գործիքները։ Այս մոտեցումը թույլ կտա ապահովել ծրագրերի միասնականություն՝ երաժշտական և գեղարվեստական բոլոր մասնագիտություններում սահմանելով հստակ չափանիշներ, թե ինչ կարողություններ պետք է ձևավորվեն յուրաքանչյուր մոդուլի ավարտին։ Արդյունքում ուսուցման գործընթացը կդառնա ավելի կանխատեսելի, գնահատումը՝ ավելի թափանցիկ, իսկ ուսանողների ձեռք բերած հմտությունները՝ համադրելի համանման քոլեջների նույն մասնագիտությունների հետ։

Քոլեջի կրթական ծրագրերը ներկայումս հիմնված են հիմնականում պետական չափորոշիչների վրա՝ առանց տեղական և միջազգային համեմատական վերլուծության։ Այս մոտեցումը կարող է սահմանափակել ծրագրերի զարգացումը և աշխատաշուկայի պահանջներին արձագանքելու կարողությունը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջին անհրաժեշտ է նախաձեռնել բենչմարքինգի գործընթաց համանման տեղական և միջազգային հաստատությունների հետ, ինչը թույլ կտա բացահայտել կրթական ծրագրերի ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերը։ Սա հնարավորություն կտա քոլեջին հստակ գնահատել՝ արդյոք իր ուսումնական բովանդակությունը բավարարում է ժամանակակից արվեստի և

երաժշտության ոլորտների պահանջներին, և տեղայնացնել հաջող փորձերը՝ բարձրացնելով շրջանավարտների մրցունակությունը: Բենչմարքինգը նաև հիմք կհանդիսանա քոլեջի առանձնահատկություններին համապատասխան ծրագրերի մշակման համար՝ ընդլայնելով քոլեջի մասնագիտական ինքնուրույնությունը և ներդնելով կուտակված փորձը կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ անհատական և ավարտական աշխատանքների կառուցվածքային և մեթոդաբանական պահանջների ներդրումը թույլ կտա ապահովել միատեսակ մոտեցում և զարգացնել ուսանողների հետազոտական ու վերլուծական հմտությունները: Արդյունքում շրջանավարտների աշխատանքները կդառնան ավելի հիմնավորված և մրցունակ՝ արտացոլելով ոչ միայն կատարողական հմտությունները, այլև վերլուծական մտածողությունը և ստեղծագործական ինքնատիպությունը:

Երաժշտական և գեղարվեստական ծրագրերում առկա է ուսանողների անհատական մոտեցման դրական մշակույթ. դասախոսները ճկուն կերպով հարմարեցնում են ուսուցման բարդությունը ուսանողների տարբեր կարողություններին: Փորձագիտական գնահատմամբ՝ քոլեջը պետք է ուշադրություն դարձնի մեթոդների բազմազանության ապահովմանը և ընտրության մեխանիզմների սահմանմանը: Քոլեջի կողմից մեթոդների դասավանդման մեթոդների քարտեզագրումը՝ ըստ մոդուլների և դրանց կիրառման հստակ չափանիշների սահմանումը՝ օրինակ, «Երգեցողություն» ծրագրում ձայնի մաքրության և արտահայտչականության, իսկ «Գեղանկարչություն» ծրագրում կոմպոզիցիոն մտածողության զարգացման համար, թույլ կտա ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ:

Փորձագիտական խումբը կարևորում է պրակտիկաների գնահատման համար հստակ գնահատման գործիքների ներդրումը, որոնք տարբերակում են կատարողական և մանկավարժական բաղադրիչները: Այսկերպ հնարավոր կլինի ամբողջական պատկեր ստանալ ուսանողների մասնագիտական աճի մասին: Սա կօգնի նաև գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմների ձևավորմանը, ինչի արդյունքում քոլեջը կկարողանա առավել արդյունավետորեն պատրաստել մասնագետներ, որոնք ունեն ինչպես բեմական, այնպես էլ դասավանդման հմտություններ:

Փորձագիտական խումբը շեշտադրում է արվեստի բնագավառի համար անհրաժեշտ գնահատման գործիքների ներդրումը ուսանողների կատարողական և գործնական կարողությունների գնահատման համար: Հստակ գնահատման չափանիշների և ռուբրիկների սահմանումը, որոնք կտարբերակեն գիտելիքի, հմտությունների և կարողությունների բաղադրիչները և կներառեն ոլորտային չափանիշներ (օրինակ՝ կատարողական մեկնաբանություն, բեմական վարքագիծ, գեղարվեստական ինքնատիպություն, կոմպոզիցիոն մտածողություն), գնահատումը կդարձնեն ավելի օբյեկտիվ, ընկալելի ուսանողների համար: Սա ոչ միայն կբարձրացնի ուսանողների մոտիվացիան, այլև թույլ կտա քոլեջին ստանալ տվյալներ ուսուցման գործընթացի ընթացիկ խնդիրների մասին՝ հիմք ստեղծելով շարունակական բարելավումների համար:

Բացի այդ, արվեստի և երաժշտական ուղղությունների հաջող զարգացումը պահանջում է ուսանողների հաղորդակցական և ինքնաներկայացման հմտությունների նպատակային զարգացում: Ուսանողների համար ստեղծագործությունների բանավոր մեկնաբանման և ներկայացման բաղադրիչի ներառումը կօգնի նրանց ձևավորել սեփական արվեստի վերլուծության և պաշտպանման կարողություն, ինչը կարևոր է թե՛ բեմական, թե՛ դասավանդման գործունեության համար: Այս մոտեցումը կխթանի ուսանողների ինքնավստահությունը, հանրային խոսքի և

մասնագիտական ինքնարտահայտման հմտությունները՝ բարձրացնելով շրջանավարտների մրցունակությունը։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների վերաբերյալ տվյալների շարունակական հավաքագրումը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների ուսումնասիրության, շրջանավարտների մասնագիտական հետագծի վերլուծության և այլ գործիքների կիրառմամբ, ինչը թույլ կտա շարունակական և պարբերական մոտեցմամբ գնահատել կրթական ծրագրերի արդյունավետությունը և բարելավումներն իրականացնել վերհանված կարիքների հիման վրա։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ Գավառի արվեստի պետական քոլեջի կողմից իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերը համապատասխանում են քոլեջի ոլորտային ուղղվածությանը, ապահովում են ՈՒՇ 5-րդ մակարդակի պահանջները, միտված են ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների ձևավորմանը, գերակշռում է գործնական բաղադրիչը, կրթական ծրագրերում կատարվել են մոդուլների տրամաբանական վերադասավորումներ, դասախոսներն ուսուցման ընթացքում կիրառում են ուսանողակենտրոն մեթոդներ և ապահովում անհատական հետադարձ կապ, ուսանողների ստեղծագործական և հետազոտական կարողությունները խթանվում են մասնագիտական առաջադրանքներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**։

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջն ուսանողների հավաքագրման նպատակով իրականացնում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ։ Մասնավորապես, համագործակցելով երաժշտական, արվեստի, հանրակրթական դպրոցների հետ՝ քոլեջը կազմակերպում է բաց դռների օրեր, հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվում են գործող մասնագիտությունները և ընդունելության կարգը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են կարիերայի պատասխանատուն, դասախոսները, ուսանողները։

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի համաձայն։ Դիմորդները հանձնում են մասնագիտական ներքոլեջային քննություն «Գեղանկարչություն» կրթական ծրագրում՝ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից, երաժշտական ուղղությամբ մասնագիտությունների դեպքում՝ մասնագիտական ընտրված ուղղվածությունից և սոլֆեջիոյից։

Ներկայումս քոլեջում սովորում է 107 ուսանող։ Ուսանողների թիվն ըստ տարիների հիմնականում կայուն է։ 2025-2026 ուսումնական տարում ամենաշատ թվով ուսանողներ սովորում են «Գեղանկարչություն» կրթական ծրագրում՝ 47 ուսանող, այնուհետև «Գործիքային

կատարողական արվեստ» կրթական ծրագրում՝ 35 ուսանող, այնուհետև «Երգեցողություն» ծրագրում՝ 25 ուսանող։

Ուսանողների հեռացումների և վերականգնումների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2024-2025 ուստարում հեռացվել է 10 ուսանող (9.9%), վերականգնվել 2 ուսանող (1.9%)։ Հեռացումների և վերականգնումների տոկոսային հարաբերակցությունը ևս ըստ տարիների գրեթե չի տարբերվում։ Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել քոլեջ-ուսանող կնքված ուսումնառության պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ բավարար կատարումն ու անհարգելի բացակայությունները։ Միևնույն ժամանակ, քոլեջի ուսումնասիրությունների համաձայն՝ սոցիալական գործոնները՝ բնակության վայրի փոփոխությունը, արտագաղթը, նույնպես հանգեցրել են բացակայություններին ու հեռացումներին։ Քոլեջը հեռացումները նվազեցնելու համար կիրառում է հետևյալ գործիքակազմը՝ խորհրդատվական ու բացատրական աշխատանքներ, անհատական հանդիպումներ ուսանողների և նրանց ծնողների հետ։

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների վերհանումն իրականացնում են Որակի ապահովման բաժինը, Կարիերայի կենտրոնը և Ուսանողական խորհուրդը։ Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ՝ դիտարկվում են դասալսումները, հարցումները, դասախոսների հետ քննարկումները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հետ քննարկումների հիման վրա ձեռք են բերվել նկարչական նյութեր, մոլբերտներ, երաժշտական որոշ գործիքներ (սինթեզատոր, քանոն), ինչպես նաև մասամբ վերանորոգվել են որոշ մասնագիտական լսարաններ։

Քոլեջի Ուսանողական խորհուրդը ևս աջակցում է ուսանողների կարիքների վերհանմանը, ուսանողների մասնակցությամբ միջոցառումների կազմակերպմանը։ Ուսանողների արձագանքների հիման վրա քոլեջում սկսել է գործել բուժկետ՝ առաջին բուժօգնություն տրամադրելու համար համալրված անհրաժեշտ դեղամիջոցներով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2024-2025 ուսումնական տարում ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ։ Բացի այդ, ուսանողական խորհուրդը կազմակերպել է էքսկուրսիաներ ՀՀ տարածքում, ինչպես նաև այցելություններ թանգարաններ և պատկերասրահներ։ ՈւԽ-ն համագործակցում է նաև Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողների հետ, ինչի արդյունքում հնարավորություն են ստացել մասնակցելու «Գործատուին ներկայանալու հմտություն» և «Թմրամոլության դեմ պայքար» թեմաներով սեմինարներին։ ՈւԽ-ն յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկին հանդես է գալիս առաջին կուրսեցիներին դիմավորելու միջոցառում-նախաձեռնությամբ։

Անդրադառնալով Ուսանողական խորհրդի՝ ուսանողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ունեցած գործառույթներին՝ հարկ է նշել, որ ուսանողների կողմից հիմնականում չեն նշվել իրավունքների խախտման դեպքեր և այս ուղղությամբ խորհուրդը դեռևս աշխատանքներ չի նախաձեռնել։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ աշխատանքների տարեկան պլանավորում և հաշվետվողականություն առկա չէ։ Միջոցառումների պլանավորման և ուսանողների հետ քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվում է ՈւԽ նիստերի արձանագրություններում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ի կողմից կազմակերպված միջոցառումների համար առանձին բյուջե նախատեսված չէ։ Ըստ անհրաժեշտության՝ քոլեջն աջակցում է ուսանողներին՝ տրամադրելով ֆինանսական միջոցներ կոնկրետ միջոցառման կազմակերպման համար։

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, ելնելով առկա մասնագիտությունների առանձնահատկություններից, քոլեջն ապահովում է անհատական դասընթացների ձևաչափը, որոնց ընթացքում դասախոսները ուսանողներին տրամադրում են անհրաժեշտ աջակցություն: Ուսումնառության ընթացքում խորհրդատվական առանձին ժամեր նախատեսված չեն: Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված չէ առանձին ժամանակացույց:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ նեղ մասնագիտական ուղղություններով կամ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում: Սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության անգլերենի դասախոսը հասարակական հիմունքներով անցկացնում է արտաժամյա դասընթացներ, որոնց կարող են մասնակցել ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց առկա չէ: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի՝ ուսանողների 99%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 96%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով 2019 թվականից քոլեջն ունի Կարիերայի պատասխանատու, որի գործունեությունը միտված է ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը՝ տեղեկատվության, խորհրդատվության տրամադրման, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման հմտությունների ձևավորման միջոցով: Կարիերայի պատասխանատուն համակարգում է շարունակական ու լրացուցիչ կրթության ծրագրերի, ինչպես նաև առկա աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը և հասանելի դարձնում ուսանողներին և շրջանավարտներին: Կարիերայի պատասխանատուն ապահովում է կապը նաև շրջանավարտների հետ: Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների 99%-ը տեղեկացված է կարիերային նպաստող ծառայությունների մասին, իսկ 67,3%-ը օգտվում և բավարարված է վերոնշյալ ծառայություններից:

Կարիերայի պատասխանատուն կազմակերպում է նաև շրջանավարտ-դիմորդ-ուսանող ձևաչափով հանդիպումներ, որտեղ հաջողություն ունեցած շրջանավարտները կիսվում են իրենց փորձով:

Քոլեջը ձևավորել է 2019 թվականից հետո ավարտած շրջանավարտների բազա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տվյալներ են հավաքագրվում նախ տվյալ տարում ավարտած շրջանավարտների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ, այնուհետև տարվա ընթացքում պատասխանատուն փորձում է կապ հաստատել նախորդ տարիներին ավարտած շրջանավարտենրի հետ՝ մասնագիտական առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության թարմացման նպատակով: Այսուհանդերձ, շրջանավարտների հետ կապի հաստատման, հետագծի վերաբերյալ տվյալների պարբերական թարմացման հստակ մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Կարիերայի պատասխանատուի կողմից 2021-2024 ուսումնական տարիների շրջանավարտների կրթական և աշխատանքային հետագծի վերաբերյալ կատարված վերլուծությունից պարզ դարձավ, որ 80 շրջանավարտներից 14-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 48-ը աշխատում են, որից 18-ը իրենց մասնագիտությամբ: Ըստ նույն վերլուծության՝ իրենց մասնագիտությամբ աշխատող 18

ուսանողներից 10 ուսանող աշխատանքի է ընդունվել կարիերայի կենտրոնի ուղղորդմամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Գործիքային կատարողական արվեստ»՝ 56,6%, «Երգեցողություն»՝ 60,7% կրթական ծրագրերը:

Անդրադառնալով ուսանողների ստեղծագործական մտքի զարգացմանը՝ հարկ է նշել, որ քոլեջը յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքի հիմքում դիտարկում է վերլուծական բաղադրիչի առկայությունը: Երաժշտական ուղղությամբ սովորող ուսանողները ստեղծագործությունը կատարելուց առաջ դիտարկում են նույն ստեղծագործությունների տարբեր կատարումներ, համեմատում դրանք, դիտարկում իրենց կարողություններին համապատասխան կատարման հնարավորությունները՝ այնուհետև մատուցում իրենց տարբերակը: «Գործիքային կատարողական արվեստ» բաժնի քանոնի մասնագիտացման դեպքում Վազգանուշ Պարմինի «Ախթամար» էտյուդ–պիեսի վերլուծությանը նվիրված բաց դասի շրջանակում առցանց ձևաչափով ուսանողները կապ են հաստատել հեղինակի հետ և հնարավորություն ունեցել համեմատելու իրենց կատարողական մեկնաբանությունները հեղինակի մտահղացման հետ: Այս մոտեցումը կիրառվել է ուսանողների ստեղծագործական մտածողության զարգացման նպատակով՝ խթանելու նրանց ինքնուրույն վերլուծելու, համեմատելու և սեփական մեկնաբանությունը հիմնավորելու կարողությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման մոտեցումները դեռևս համատարած կիրառում չունեն քոլեջում:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է հիմնականում հարցումների միջոցով: Դրանք հիմնականում վերաբերում են կրթական գործընթացների, ռեսուրսների վերաբերյալ բավարարվածությանը: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են լսարանների սակավությանը, դրանց վերանորոգման անհրաժեշտությանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերհանված կարիքների հիման վրա քոլեջը փորձում է լսարանների որոշակի վերանորոգումներ իրականացնել, իսկ համերգային դահլիճի վերանորոգումը շարունակում է խնդիր մնալ՝ պայմանավորված ֆինանսական միջոցների սղությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գավառի արվեստի պետական քոլեջն ապահովում է ուսանողների կայուն հոսք և դիմորդների հետաքրքրվածություն արվեստի և երաժշտության ուղղություններով: Մասնագիտական կողմնորոշման և բաց դռների օրերի կազմակերպումը նպաստել է քոլեջի ճանաչելիության բարձրացմանը տարածաշրջանում և նոր ուսանողների ներգրավմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտական կողմնորոշման միջոցառումների պլանավորումը և դրանց արդյունքների պարբերական վերլուծությունը կնպաստեն առավել կողմնորոշված դիմորդների ներգրավմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ուսանողների առաջադիմության ապահովման նպատակով կիրառում է անհատական աշխատանքների ձևաչափեր և խորհրդատվական աջակցություն: Այս մոտեցումը նպաստել է ուսանողների կրթական առաջընթացին և անհատական մոտեցման մշակույթի ձևավորմանը: Միևնույն ժամանակ, խորհրդատվական աջակցության պարբերական և համակարգված կազմակերպումը կնպաստի ուսումնառությունից հրաժարվելու դեպքերի կանխարգելմանը և անբավարար առաջադիմությամբ պայմանավորված հեռացումների թվի նվազեցմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը զարգացնում է ուսանողակենտրոն միջավայր՝ արձագանքելով ուսանողների կարիքներին և նրանց արձագանքների հիման վրա բարելավում է նյութատեխնիկական պայմանները: Նկարչական

նյութերի, երաժշտական գործիքների ձեռքբերումը և լսարանների բարելավումը վկայում են ուսանողների ձայնը լսելու և արձագանքելու պատրաստակամության մասին: Այս գործընթացի հետագա ինստիտուցիոնալ դառնալը՝ ուսանողների կարիքների պարբերական վերլուծության և դրա հիման վրա պլանավորված բարելավումների միջոցով, կնպաստի ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը և ուսանողների գոհունակության կայուն բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Ուսանողական խորհրդի ակտիվությունը մշակութային և սոցիալական նախաձեռնություններում, որոնք նպաստել են ուսանողական կյանքի բազմազանությանը: Միևնույն ժամանակ, ՈւԽ-ի գործունեության պլանավորված կազմակերպումը և հաշվետվողականության մեխանիզմների ներդրումը կնպաստեն ուսանողների մասնակցության ընդլայնմանը կառավարման գործընթացներում և նրանց առաջնորդական հմտությունների զարգացմանը: Սա հնարավորություն կտա ուսանողներին ոչ միայն լինել միջոցառումների մասնակից, այլև կրթական միջավայրի ձևավորման ամբողջական մասնակից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է Կարիերայի կենտրոնը, որի գործունեությունը նպաստել է շրջանավարտների և գործատուների միջև կապերի ձևավորմանը, ինչպես նաև մի շարք շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը: Միևնույն ժամանակ, շրջանավարտների հետագծի վերլուծության պարբերական մեխանիզմների ներդրումը (օրինակ՝ տվյալների թարմացում ավարտելուց 6 ամիս և 1 տարի անց) կնպաստի կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը՝ հիմնվելով շրջանավարտների փորձի և գործատուների արձագանքների վրա: Սա կապահովի կրթության և աշխատաշուկայի միջև ամուր և երկարաժամկետ կապ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների ստեղծագործական և վերլուծական կարողությունների զարգացման ուղղությամբ կիրառվող մեթոդները, օրինակ՝ ստեղծագործությունների համեմատական վերլուծությունը և հեղինակների հետ կապի հաստատումը: Այս մոտեցումները նպաստել են ուսանողների քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների զարգացմանը: Սակայն դրանց ընդլայնումը բոլոր կրթական ծրագրերում և համակարգված կապն ուսումնառության արդյունքների հետ կնպաստեն ուսանողների ստեղծագործական ինքնատիպության զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իրականացնում է ուսանողների բավարարվածության հարցումներ, ինչը նպաստել է ռեսուրսների վերաբերյալ կարիքների վերհանմանը: Միևնույն ժամանակ, հարցումների մեթոդական կատարելագործումը և դրանց արդյունքների վերլուծության հիման վրա բարելավումների պլանավորումը կնպաստեն կրթական միջավայրի որակի շարունակական բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման տարատեսակ մեխանիզմներ, ձևավորված է այնպիսի կրթական միջավայր, որն ապահովում է ուսանողների գիտելիքների և հմտությունների զարգացումը՝ միաժամանակ նպաստելով նրանց հետագա մասնագիտական զբաղվածությանը, գործում են կարիերայի ուղղորդման և աջակցման ծառայություններ, իսկ Ուսանողական խորհուրդը ձեռնարկում է քայլեր ուսանողական կյանքի ակտիվացման ուղղությամբ և հանդես գալիս համագործակցության նախաձեռնություններով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2023-2028թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է իրականացնել բարձրորակ դասախոսական կազմի նպատակաուղղված ներգրավում՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ համաձայն «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների թափուր տեղի համալրման մրցութային կարգի» և քոլեջի կողմից 2023թ.-ին ընդունված «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգի»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համատեղությամբ ընդունվող մանկավարժներն աշխատանքի ընդունվում են առանց մրցույթի՝ հարցազրույցի արդյունքների հիման վրա:

Դասախոսների գործառույթները սահմանվում են համապատասխան պաշտոնների նկարագրերով: Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսների համար սահմանված պահանջները տարանջատված չեն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսներին ընտրելիս քոլեջը կարևորում է համապատասխան մասնագիտական ուղղությամբ կրթության առկայությունը, արվեստի և երաժշտական հաստատություններում դասավանդման պրակտիկ փորձառությունը:

2025-2026 ուստարում քոլեջում դասավանդում են 40 դասախոս (ներառյալ՝ նվագակցողները), որոնցից 30-ը ունեն բարձրագույն կրթություն, 10-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի հիմնական դասախոսների թիվը 21 է, համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը՝ 19: Պրակտիկ փորձառությամբ դասախոսների թիվը 8 է: Քոլեջը խրախուսում է նաև իր շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացներում՝ այս հնարավորությունը դիտարկելով որպես համալրման և կայունության ապահովման մեխանիզմ: Քոլեջի 12 շրջանավարտ դասավանդում են քոլեջում. նրանցից 7-ը քոլեջն ավարտելուց հետո ստացել են նաև բարձրագույն կրթություն:

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր դասախոս դասավանդում է նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 8 մոդուլ:

Քոլեջը դասախոսական կազմի գնահատման նպատակով 2024-2025 ուսումնական տարում իրականացրել է ուսանողների հարցումներ՝ գնահատելու դասախոսների մեթոդական և մանկավարժական կարողությունները: Հարցումների միջոցով ստացվել են տվյալներ դասավանդման մեթոդների և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ, սակայն դրանց վերլուծությունը և արդյունքների հիման վրա բարելավման քայլերի իրականացումը դեռ չեն կատարվել, ինչի արդյունքում հարցումները դասավանդման որակի բարելավման

վրա ազդեցություն չեն ունեցել: Դասախոսների գնահատման երկրորդ գործիքը քոլեջում դասալսումն է: 2022 թվականին հաստատված «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգի» հիման վրա իրականացվում են պլանավորված և չպլանավորված դասալսումներ: Քոլեջը ձևավորել է դասալսումների տարեկան ժամանակացույց, կազմակերպում է փոխադարձ դասալսումներ և դրանց միջոցով վերհանում մեթոդական խնդիրներ՝ հատկապես ուսանողների ակտիվ ներգրավման և դասավանդման ձևերի կիրառման մասով: Բացահայտված խնդիրների մի մասը ստանում է օպերատիվ լուծում՝ անմիջապես դիտարկումից հետո, սակայն դասալսումների համակարգային վերլուծություն և դրանց ազդեցության գնահատում քոլեջը դեռևս չի իրականացնում: Արդյունքում դասախոսների գնահատման գործիքներն ապահովում են տվյալների հավաքագրում, բայց ոչ դրանց վերլուծություն և շարունակական բարելավման գործընթաց:

Քոլեջի դասախոսները վերջին հինգ տարիների ընթացքում պարբերաբար մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող մեթոդական վերապատրաստումներին: Յուրաքանչյուր տարի վերապատրաստումներին մասնակցել է դասախոսական կազմի շուրջ 20%-ը: Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական զարգացման համար հատկացումները 2024թ. կազմել են բյուջեի 0.12%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի 18 դասախոսներ մասնակցել են «Փափուկ հմտությունների առցանց դասընթացի» ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների համար: Քոլեջը դեռևս չի պլանավորել և իրականացրել համատեղող պրակտիկ փորձառությամբ դասախոսների և հիմնական դասախոսների փորձի փոխանակման և կարողությունների զարգացման միջոցառումներ:

Արդյունքում քոլեջում առկա են մասնագիտական զարգացման առանձին նախաձեռնություններ, սակայն դրանք չեն ձևավորվել որպես համակարգային քաղաքականություն, և դրանց ազդեցությունը դասավանդման արդյունավետության և կրթության որակի վրա դեռևս չի գնահատվել:

Քոլեջի դասախոսական կազմի կայունությունն ապահովվում է երիտասարդ դասախոսների նպատակային ներգրավման և փորձառու մասնագետների փորձի փոխանցման միջոցով: 2025-2026 ուստարում քոլեջը համալրվել է երեք նոր երիտասարդ դասախոսներով, ինչը թույլ է տալիս աստիճանաբար իրականացնել սերնդափոխություն և պահպանել կրթական գործընթացի շարունակականությունը: Դասախոսների միջին տարիքը ներկայումս 47 է: Կադրային ռիսկերի նվազեցման նպատակով քոլեջը ձևավորել է 12 մասնագետներից բաղկացած դասախոս թեկնածուների բազա՝ ընդգրկելով նախկին դասախոսներին և տարածաշրջանի արվեստի ու երաժշտական դպրոցների փորձառու մասնագետներին: Այս բազան հնարավորություն է տալիս արագ արձագանքել կադրային թափուր տեղերին, ինչի արդյունքում նախորդ ուսումնական տարում բազայի թեկնածուներից մեկը համալրել է քոլեջի դասախոսական կազմը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սկսնակ դասախոսների կարողությունների զարգացման պլանավորված մեխանիզմներ չեն իրականացվում: Այսուհանդերձ, փորձառու դասախոսները, բաժինների վարիչները պատրաստակամ են աջակցելու դասախոսներին, պատասխանելու նրանց հարցերին: Սկսնակ դասախոսները ևս իրականացնում են փոխադարձ դասալսումներ լավագույն փորձի վերհանման և տեղայնացման նպատակով:

Քոլեջում դասախոսական կազմի խրախուսման համար 2024թ.-ին հաստատվել է «Նյութական խրախուսման, պարգևատրման կարգը»: Կարգի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ խրախուսման համար սահմանված նախապայմանները բավական ընդհանրական են և ոչ չափելի, այսպես օրինակ խրախուսումներ են նախատեսված աշխատողների բարեխիղճ աշխատանքի իրականացման, կարգապահական կանոների ճշգրիտ պահպանման,

մասնագիտական որակների, ինքնազարգացման և նախաձեռնողականության համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցույթներում բարձր հորիզոնականներ զբաղեցրած ուսանողները, ինչպես նաև նրանց դասախոսները ստացել են պատվոգրեր և շնորհակալագրեր: Ֆինանսական պարգևատրում ստացել է քոլեջի ողջ անձնակազմը քոլեջի հիմնադրամն 35-րդ տարեդարձի առթիվ:

Ուսումնաօժանդակ անձնակազմն աշխատանքի է ընդունվում ոչ մրցութային կարգով՝ հաշվի առնելով համապատասխան կրթությունը, աշխատանքային փորձը և համապատասխանությունը պաշտոնի նկարագրին: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնի նկարագրերով: Քոլեջն ունի 2 ուսումնաօժանդակ, 9 սպասարկող անձնակազմ: Քոլեջի 8 վարչական աշխատակիցներ իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց նաև դասավանդում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում դասախոսական կազմի ձևավորումն իրականացվում է մրցութային սկզբունքով՝ ապահովելով մասնագիտական համապատասխանություն կրթական ծրագրերի բովանդակությանը: Դրական է, որ քոլեջը կիրառում է դասալսումների և փոխադարձ դիտարկումների համակարգ, որը հնարավորություն է տալիս բացահայտել դասավանդման մեթոդական խնդիրներ և կիսվել արդյունավետ փորձով: Սակայն դասալսումների արդյունքները դեռևս չեն վերածվում համակարգային վերլուծության և բարելավման պլանների, ինչի հետևանքով հետադարձ կապի ազդեցությունն ուսուցման որակի վրա դեռևս թույլ է:

Քոլեջի կողմից դասախոսների պարբերական մասնակցությունը վերապատրաստումներին կարևոր նախադրյալ է մասնագիտական զարգացման համար: Այնուամենայնիվ, վերապատրաստումների բովանդակությունը և հաճախականությունը դեռևս չեն կապվում կրթական ծրագրերի առանձնահատկությունների և դասախոսների անհատական կարիքների հետ, ինչի արդյունքում դրանց ազդեցությունը մնում է սահմանափակ: Տարեկան բյուջեում դասախոսների զարգացման համար նախատեսված հատկացումների աննշան մասնաբաժինը (0.12%) չի ապահովում շարունակական և նպատակային մասնագիտական աճ:

Երիտասարդ դասախոսների ներգրավումը և փորձառու մասնագետների կողմից նրանց աջակցությունը կարևոր քայլ է սերնդափոխության և կայունության ապահովման ուղղությամբ: Այնուամենայնիվ, մենթորական համակարգի բացակայությունը սահմանափակում է փորձի փոխանցման գործընթացի համակարգվածությունը և նոր դասախոսների հարմարվողականության արագությունը:

Դրական է, որ քոլեջը հաստատել է դասախոսների խրախուսման կարգ, սակայն սահմանված չափանիշները չափելի չեն և չեն կապվում կրթական արդյունքների հետ: Խրախուսման չափանիշների հստակեցումը և դրանք դասավանդման արդյունքների հետ կապելը թույլ կտա ձևավորել արդար և արդյունահենք խրախուսման համակարգ, ինչը կնպաստի դասախոսների մոտիվացիայի և նախաձեռնողականության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է դասախոսական կազմի ընտրության և համալրման հստակ ընթացակարգ, դասախոսներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն և դասավանդման պրակտիկ փորձառություն, հաստատությունը խրախուսում է շրջանավարտների ներգրավումը և ապահովում դասախոսական կազմի կայունությունը երիտասարդ մասնագետների ներգրավմամբ ու փորձի փոխանակման

մեխանիզմներով, իրականացվում են դասալսումներ դասավանդման որակի գնահատման նպատակով, ունի բավարար ուսումնաօժանդակ և վարչական կազմ կրթական ծրագրերի իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ԳԱՊՔ-ն ռազմավարական ծրագրում հետազոտությունների իրականացումը որպես առաջնահերթություն չի սահմանել: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը 2023թ. հաստատել է «Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականությունը» և «Հետազոտական աշխատանքների վերլուծության ընթացակարգը»: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջն իր կրթական ծրագրերի ոլորտային ուղղությունների համաձայն չի սահմանել հետազոտական ուղղություններ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում հետազոտական բաղադրիչը դիտարկվում է որպես մասնագիտական հմտությունների զարգացման անբաժան մաս՝ տեսական, տեխնիկական և ստեղծագործական հարցերի խորքային ուսումնասիրության միջոցով: Մասնավորապես՝ «Երգեցողություն» կրթական ծրագրում հետազոտությունը դիտարկվում է որպես վոկալ արվեստի տեխնիկական և մեկնաբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն, որի արդյունքում ուսանողները ձևավորվում են որպես տեղեկացված և գիտակցված կատարողներ՝ կարողանալով զարգացնել իրենց վոկալ վարպետությունը: «Գործիքային կատարողական արվեստ» ծրագրում հետազոտությունն արտահայտվում է երաժշտական ստեղծագործությունների վերլուծությամբ, գործիքի տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրությամբ և կատարողական մեթոդների որոնումով, ինչը հնարավորություն է ձևավորում ուսանողների վերլուծական և կատարողական կարողությունների կատարելագործման համար:

Մասնագիտական մոդուլների շրջանակում ստեղծագործությունը կատարելուց առաջ ուսանողները ունկնդրում և համեմատում են նույն ստեղծագործության տարբեր կատարումներ, վերլուծում դրանց տեխնիկական ու մեկնաբանական առանձնահատկությունները և փորձում համադրել սեփական կարողությունների ու մասնագիտական հմտությունների հետ: Այս գործընթացը ոչ միայն զարգացնում է նրանց լսողական և վերլուծական կարողությունները, այլև օգնում է կատարողական ոճի ձևավորմանը:

«Գեղանկարչության» ծրագրում հետազոտությունը վերաբերում է կերպարվեստի տեսական հիմքերի, տեխնիկական միջոցների և ստեղծագործական մեթոդների ուսումնասիրությանը, որոնք ուսանողին թույլ են տալիս խորացնել մասնագիտական հմտությունները և ապահովել ինքնատիպ ստեղծագործական արդյունք: Այսկերպ հետազոտական գործունեությունը դրսևորվում է ստեղծագործական առաջադրանքներին նախորդող վերլուծությամբ. ուսանողները ուսումնասիրում և համեմատում են տվյալ ստեղծագործողի

ոճական առանձնահատկությունները, դիտարկում նույն հեղինակի տարբեր ժամանակաշրջանների աշխատանքները, ինչպես նաև համեմատական վերլուծություն են կատարում համանուն դարաշրջանի այլ հեղինակների գործերի հետ: Այս մոտեցումը թույլ է տալիս նրանց հասկանալ արվեստի պատմական և ոճական զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև ձևավորել սեփական ստեղծագործական լուծումները հիմնավորված վերլուծության հիման վրա:

«Գեղանկարչություն» կրթական ծրագրի «Կոմպոզիցիա» մոդուլի շրջանակում դասախոսն ուսանողների հետ կազմակերպել է աշխատաժողով, որը նվիրված է եղել գույների հոգեբանական ազդեցությանը դիտողի վրա: Աշխատաժողովը համակցել է գեղարվեստական և արտթերապևտիկ մոտեցումները՝ հնարավորություն տալով ուսանողներին հասկանալու, թե ինչպես կարող են գունային լուծումները ոչ միայն ստեղծել գեղագիտական արժեք, այլև ազդել դիտողի զգացմունքային և հոգեբանական ընկալումների վրա: Այս փորձարարական մոտեցումը նպատակ ունի խթանելու ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտածողությունը՝ նպաստելով նրանց մասնագիտական կարողությունների ընդլայնմանը:

Քոլեջում ուսանողներին հանձնարարվում են նաև ռեֆերատներ հանրակրթական առարկաներից:

«Գեղանկարչություն» կրթական ծրագրում ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ավարտական աշխատանքի պաշտպանությամբ: Քոլեջը խթանում է ուսանողների կողմից յուրօրինակ թեմաների ընտրությունը՝ ապահովելով աշխատանքների բազմազանությունն ու ինքնատիպությունը: Ավարտական աշխատանքին (կտավ) զուգահեռ ուսանողները ներկայացնում են նաև վերլուծական բաղադրիչը՝ հիմնավորելով թեմայի ընտրությունը, ներկայացնելով օգտագործված տեխնիկական միջոցները, կոմպոզիցիոն լուծումները և ոճական առանձնահատկությունները: Այս մոտեցումը թույլ է տալիս գնահատել ոչ միայն ստեղծագործական արդյունքը, այլև ուսանողի վերլուծական և մասնագիտական հիմնավորման կարողությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման մոտեցումը դեռևս համատարած բնույթ չունի քոլեջում և իրականացվում է առանձին դասախոսների նախաձեռնությամբ: Աշխատանքներում հիմնավոր եզրակացությունները, ամփոփումները սակավ են:

«Երգեցողություն» և «Գործիքային կատարողական արվեստ» կրթական ծրագրերում ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ավարտական ելույթի միջոցով: Ուսանողները ոչ միայն կատարում են ընտրված երաժշտական ստեղծագործությունները, այլև ներկայացնում հեղինակին, վերլուծում երաժշտական և վոկալ տեխնիկական լուծումները, ինչպես նաև մեկնաբանում իրենց կատարողական մոտեցումը: Այս գործընթացը հնարավորություն է տալիս գնահատել ուսանողի ոչ միայն կատարողական վարպետությունը, այլև նրա վերլուծական կարողությունները և մասնագիտական մտածողությունը:

Փորձագիտական ուսումնասիրություններից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի սահմանել հետազոտական աշխատանքների կատարման պահանջները, դրանց գնահատման բաղադրիչները, հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսման մեխանիզմները:

Ուսանողների շրջանում իրականացված հարցումների համաձայն՝ հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներով բավարարվածությունը նրանք գնահատել են միջինից բարձր, մասնավորապես մասնագիտացված լսարաններից գոհ են հարցվածների 50%-ը, ուսումնական արհեստանոցներից՝ 41,77%-ը, իսկ նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայից՝ 62%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների

կողմից հետազոտության իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական արդիական գրականությամբ, ձայնադարանով, ձայնագրման ստուդիայով քոլեջը դեռևս ապահովված չէ:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն ուսանողների հետ ստեղծագործություններն ուսումնասիրելիս ևս իրականացնում են վերլուծություն, տարբեր ելույթների համեմատություն և համադրում: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ տեղական և միջազգային մասնագիտական այլ փորձի ուսումնասիրման, նոր մեթոդները և մոտեցումները կրթական ծրագրերում ներդնելու մեխանիզմներ քոլեջում դեռևս ներդրված չեն: Դասախոսների կողմից տպագրված հոդվածներ, մեթոդական աշխատանքներ առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում հետազոտությունն ընկալվում է որպես մասնագիտական կրթության անբաժան բաղադրիչ. ուսանողները ոչ միայն զարգացնում են գործնական հմտությունները, այլև անցնում են վերլուծական փուլեր, ինչի արդյունքում ձևավորվում է նրանց համակողմանի մասնագիտական մտածողությունը: Ստեղծագործական և հետազոտական աշխատանքների զուգակցումը նպաստում է ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողությունների զարգացմանը, ստեղծագործական որոշումների հիմնավորմանը և սեփական մեկնաբանության ձևավորմանը՝ ինչը կարևոր հիմք է արվեստի և երաժշտության ոլորտում մրցունակ մասնագետների պատրաստման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական առաջադրանքները պետք է ուղղվեն հստակ վերջնարդյունքի՝ օրինակ՝ վերլուծական մտածողության ձևավորման, ստեղծագործական ինքնատիպության կամ գործնական հմտությունների կատարելագործման հասնելուն: Հետազոտական առաջադրանքների կապակցումն ակնկալվող արդյունքներին և գնահատումը դրանց հիման վրա ուսանողների աշխատանքը կդարձնեն ավելի նպատակային, իսկ գնահատումը՝ ավելի օբյեկտիվ:

Հետազոտական քաղաքականության հստակեցումը և յուրաքանչյուր կրթական ծրագրի համար թեմատիկ ուղղությունների ձևավորումը կապահովեն հետազոտական աշխատանքի համակարգվածությունը: Սա կնպաստի ուսուցման և հետազոտության փոխկապակցման ամրապնդմանը և քոլեջի դիրքավորմանը որպես ստեղծագործական մտածողությունը խթանող ուսումնական հաստատություն:

Ուսանողների ավարտական աշխատանքներում հետազոտական բաղադրիչի առկայությունը դրական է գնահատվում, սակայն դրա որակական մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ներդնել հստակ մեթոդական ցուցումներ և գնահատման չափորոշիչներ: Այդ չափորոշիչները պետք է ներառեն օգտագործված գրականության արժանահավատությունը, թեմայի համապատասխանությունը կրթական ծրագրի նպատակներին և եզրակացությունների հիմնավորվածությունը: Այս մոտեցումը հնարավորություն կտա գնահատել ոչ միայն ստեղծագործական արդյունքը, այլև ուսանողի վերլուծական մտածողությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտացված հետազոտական և ստեղծագործական աշխատարանների ձևավորումը կնպաստի ուսանողների գործնական հմտությունների խորացմանը: Աշխատարանները կարող են դառնալ այն հարթակը, որտեղ ուսանողները կկիրառեն տեսական գիտելիքները իրական ստեղծագործական գործընթացում՝ փորձարկելով նոր տեխնիկական և մեթոդական լուծումներ: Սա կհանգեցնի գործնական հմտությունների և վերլուծական մտածողության զուգահեռ զարգացման՝ ձևավորելով ավելի ինքնուրույն և նախաձեռնող մասնագետներ:

Հետազոտական մտածողության զարգացումը կարելի է ապահովել նաև վարպետության դասերի միջոցով, որտեղ փորձառու դասախոսները կներկայացնեն տարբեր մեթոդներ և գործնական մոտեցումներ: Այս ձևաչափը կօգնի ուսանողներին դիտարկել հետազոտությունը ոչ թե տեսական առաջադրանք, այլ ստեղծագործական գործընթացի մաս՝ բարձրացնելով ուսուցման գործընթացում ուսանողների ներգրավվածությունը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև հետազոտական առաջադրանքների գնահատման հստակ չափանիշների և ցուցիչների սահմանումը: Սա հնարավորություն կտա դասախոսներին և ուսանողներին հստակ հասկանալ ակնկալվող արդյունքները, ինչպես նաև ապահովել հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ՝ ուսումնառության որակը շարունակաբար բարելավելու համար: Գնահատման այս համակարգը, եթե կապվի ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջների հետ, կապահովի ուսումնառության և հետազոտության համապատասխանությունը ազգային որակավորման չափանիշներին:

Քոլեջի դասախոսական ներուժի ուղղորդումն ուսանողների հետ համատեղ հետազոտական նախագծերի իրականացմանն ու ուսումնական նյութերի մշակմանը կնպաստի հետազոտական փորձի ամրապնդմանը: Այս մոտեցումը հնարավորություն կտա դասախոսներին և ուսանողներին գործել որպես գործընկերներ, ինչի արդյունքում կզարգանան համագործակցային և վերլուծական հմտությունները: Հետազոտական նախաձեռնությունների խրախուսման ձևերի ներդրումը՝ օրինակ մրցույթներ, ճանաչման և պարգևատրման մեխանիզմներ, կնպաստի դասախոսների և ուսանողների ակտիվ մասնակցությանը հետազոտական գործընթացներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում հետազոտական բաղադրիչը դիտարկվում է որպես մասնագիտական հմտությունների զարգացման անբաժան մաս, կրթական ծրագրերում ուսանողները ներգրավվում են վերլուծական և ստեղծագործական առաջադրանքների իրականացման մեջ, ամփոփիչ ատեստավորման ընթացքում ներկայացնում են ոչ միայն գործնական արդյունքը, այլև մեկնաբանում և հիմնավորում իրենց ընտրությունը, առանձին մոդուլներում իրականացվում են նորարարական և փորձարարական մոտեցումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Գավառի արվեստի պետական քոլեջն իր 2023-2028 թթ. Ռազմավարական ծրագրով խնդիր է սահմանել ձևավորել նպաստավոր, տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ քոլեջի ուսանողների ստեղծագործական միտքը զարգացնելու և արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Քոլեջը զբաղեցնում է 902մ^2 ընդհանուր մակերեսով տարածք, որտեղ տեղակայված են 16 լսարան, որոնցից 6-ը արվեստանոցներ են: Արվեստանոցներում առկա են բավարար քանակով մոլբերտներ՝ ըստ ուսանողների թվաքանակի: Լսարաններում կան բավարար քանակությամբ ռոյալներ և դաշնամուրներ՝ անհատական և խմբային պարապմունքների համար: Քոլեջն ունի

շարժական 1 պրոյեկտոր և 8 համակարգիչ, որոնք տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման անհրաժեշտություն ունեն: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը չունի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, սննդի կետ: Բնագիտական առարկաների վերաբերյալ առաջադրանքները հիմնականում տեսական բնույթ ունեն, դասախոսները կիրառում են նաև տեսանյութերի ցուցադրումը դասապրոցեսի ընթացքում: Քոլեջի համերգային դահլիճը և մարզադահլիճը վերանորոգման անհրաժեշտությամբ պայմանավորված ներկայումս չեն կիրառվում:

Հաշվի առնելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները՝ ուսանողներն անհատական երաժշտական գործիքները (դուդուկ, շվի, դհոլ և այլն) իրենց հետ բերում են քոլեջ: Քոլեջում առկա են նաև որոշ երաժշտական գործիքներ, որոնք օգտագործվում են խմբային պարապմունքների համար: Վերջին տարիներին քոլեջը կատարել է թիրախային համալրումներ՝ ձեռք բերելով բաս դուդուկ, քանոն և այլն, ինչը հնարավորություն է տվել ընդլայնել ուսուցման հնարավորությունները և ապահովել գործիքների բազմազանությունը:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 457 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գրադարանի համալրման համար քոլեջը ֆինանսական միջոցներ չի նախատեսում. առկա համալրումները հիմնականում կատարվում են նվիրատվությունների շնորհիվ: Դրա հետևանքով գրադարանում բացակայում է այն մասնագիտական և արդիական գրականությունը, որն անհրաժեշտ է կրթական ծրագրերի իրականացման համար: Գրադարանը թվայնացված չէ և չի անդամակցում գրադարանային ցանցերի: Ընթերցասրահ առկա չէ, բայց գրադարանում կա համակարգիչ ուսանողների կիրառման համար:

Քոլեջն ունի համագործակցության համաձայնագրեր Վ. Պետրոսյանի անվան մարզային և քաղաքային գրադարանների հետ՝ գրադարանից օգտվելու, համատեղ ռեսուրսների օգտագործման, միջոցառումների կազմակերպման նպատակով: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին առավելապես մասնագիտական գրականություն տրամադրում են դասախոսները՝ հայերենով մշակված ուսումնառության նյութերի միջոցով:

Քոլեջի ֆինանսական միջոցների վերլուծությունից պարզ դարձավ, որ 2024թ. քոլեջի բյուջեի եկամուտների 98,14%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 1,86%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսավորման այլընտրանքային մուտքեր, դրամաշնորհային ծրագրեր քոլեջը ներկայումս չունի: Քոլեջի կողմից իր կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան մշակվել են կարճաժամկետ դասընթացների ծրագրեր, որոնց իրականացումը դեռևս չի մեկնարկել:

Քոլեջի ծախսերի վերլուծության համաձայն՝ 2024 թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 92,194%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, իսկ մյուս դրամական միջոցները օգտագործվել են հետևյալ ուղղություններով՝ կրթաթոշակ (3,06%), գործուղման ծախսեր (0,076%), հետազոտության ծախսեր (0,20%), դասախոսների մասնագիտական զարգացման ծախսեր (0,12%), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր (0,18%), տնտեսական ծախսեր (3,50%), ծառայությունների ձեռքբերման ծախսեր (0,51%), ռեսուրսների պահպանման ծախսեր (0,16%):

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի ռազմավարական զարգացման մյուս ուղղություններով՝ որակի ապահովման համակարգի

կատարելագործման, տեղեկատվական բազայի զարգացման ուղղությամբ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել։

Քոլեջում գերակշռում են անվճար համակարգում սովորող ուսանողները։ Վճարովի համակարգում սովորում է 5 ուսանող։ Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն տեղի չի ունեցել՝ պայմանավորված մարզի սոցիալական խնդիրներով։

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ թղթային տարբերակով։ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում առկա չէ։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման, հակահրդեհային, տեսահսկման համակարգեր։ Ուսանողների արձագանքների հիման վրա քոլեջը նախաձեռնել է բուժկետի ձևավորումը, որն ապահովված է դեղերով, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներով։ Ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի թեքահարթակ առաջին հարկ մուտք գործելու համար։ Ներկայումս քոլեջում չեն սովորում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ։ Քոլեջի շենքը չունի ապաստարան։

2024-2025 ուստարում քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են մասնագիտական լսարաններից և գրականությունից։ Ուսանողների 49%-ը և դասախոսների շուրջ 67 %-ը դահլիճ/սպորտդահլիճի պայմաններից ունեն ցածր բավարարվածություն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների արձագանքների հիման վրա իրականացվել են լսարանների կոսմետիկ վերանորոգումներ և որոշ երաժշտական գործիքների ձեռքբերում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գավառի արվեստի պետական քոլեջը ձևավորել է կրթական ծրագրերի առանձնահատկություններին հատուկ ուսումնական միջավայր, որը բավարարում է հիմնական մասնագիտական կարիքները և ապահովում է ուսանողների գործնական հմտությունների զարգացում։ Այս ուղղությամբ կատարված քայլերը, մասնավորապես մասնագիտական լսարանների բարելավումը և երաժշտական գործիքների համալրումը, նպաստել են ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը։ Միևնույն ժամանակ, կրթական միջավայրի արդիականացումը՝ տեխնիկական սարքավորումների վերազինմամբ և ծրագրային համալրմամբ, կնպաստի թվային հմտությունների զարգացմանը, հեռավար և հիբրիդ ուսուցման տարրերի կիրառմանը վարպետաց դասերի անցկացման նպատակով և կբարձրացնի ուսուցման մատչելիությունն ու արդյունավետությունը։ Քոլեջը չունի բնագիտական առարկաների՝ ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, ինչն իր ազդեցությունն ունի ընդհանուր կրթական ծրագրերի (հատկապես ընդհանուր կրթական և միջառարկայական բաղադրիչներ ունեցողների) գործնական բաղադրիչի վրա։ Չնայած այն հանգամանքին, որ քոլեջի հիմնական մասնագիտական ուղղվածությունը երաժշտությունն ու արվեստն է, բնագիտական լաբորատորիաների բացակայությունը սահմանափակում է ուսանողների փորձարարական մտածողության և կիրառական գիտելիքների ձևավորումը՝ հատկապես միջառարկայական նախագծերի իրականացման դեպքում։

Գրադարանի առկայությունը և տեղական գրադարանների հետ համագործակցությունը դրական հիմք են ուսումնառության աջակցման համակարգի ձևավորման համար։ Սակայն

գրադարանի համալրումը հիմնականում իրականացվում է նվիրատվությունների միջոցով, ինչն ապահովում է ոչ պլանային համալրում: Անհրաժեշտ է մշակել գրադարանի զարգացման պլան՝ ներառելով տարեկան համալրման բյուջե, թվայնացման փուլային քայլեր և մասնագիտական օտարալեզու գրականության ձեռքբերում՝ ուսանողների հետազոտական կարողությունները զարգացնելու նպատակով:

Քոլեջի ֆինանսական կայունությունը հիմնականում ապահովվում է պետական ֆինանսավորման հաշվին, ինչը երաշխավորում է հիմնական գործունեության շարունակականությունը: Սակայն եկամուտների կառուցվածքի միակողմանիությունը սահմանափակում է զարգացման ծրագրերի իրականացման հնարավորությունները: Խորհուրդ է տրվում ակտիվացնել դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, սկսել կարճաժամկետ դասընթացների իրականացումը և ձևավորել գործընկերային մոդելներ՝ ֆինանսական ռիսկերը նվազեցնելու և ռեսուրսները դիվերսիֆիկացնելու համար:

Քոլեջի կողմից բուժկետի ձևավորումն ու անվտանգության համակարգերի ներդրումը դրական քայլ են ապահով միջավայր ստեղծելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը և տեղեկատվական հարթակների զարգացումը կնպաստեն կառավարման արդյունավետությանը, ուսումնական գործընթացների թափանցիկությանը և տվյալների արագ փոխանակմանը: Այս քայլը նաև կբարձրացնի վարչական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և կնվազեցնի թղթային գործավարության ծախսերը:

Քոլեջի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավումը կարևոր նշանակություն ունի ուսանողական կյանքի որակի բարձրացման համար: Համերգային դահլիճի և մարզադահլիճի վերանորոգումը, սննդի կետի և ընթերցասրահի ձևավորումը կխթանեն ուսանողների մասնակցությունը կրթական և արտաուսումնական գործունեությանը՝ ձևավորելով ստեղծագործական և ներգրավող միջավայր:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի արվեստի պետական քոլեջն ուսանողների թվին համապատասխան ունի կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվող նվազագույն ռեսուրսներ՝ մասնագիտացված լսարաններ, արվեստանոցներ, երաժշտական գործիքներ և մոլբերտներ, ֆինանսական միջոցներ է հատկացնում ռեսուրսների պարբերաբար թարմացման և վերազինման համար, հաստատությունում առկա է դասախոսների և ուսանողների գործունեության համար ապահով և անվտանգ միջավայր, իրականացվում են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են մասնագիտական լսարաններից՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Քոլեջում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը տնօրենին՝ սահմանված ժամանակացույցի համաձայն: Հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք հիմնականում նկարագրական են և ունեն տեղեկատվական բնույթ իրականացված գործընթացների քանակի վերաբերյալ՝ ըստ տարիների փոփոխելով միայն ներկայացված տվյալները (ուսանողների, դասախոսների թիվ և այլն):

Տնօրենը հաշվետու է Կառավարման խորհրդին: Ստորաբաժանումների պատասխանատուներից ստացված հավաքական տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և Կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության վերաբերյալ, որը հանդիսանում է քոլեջի գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվություններում ըստ տարիների ներկայացված են ուսումնական գործընթացի մանրամասները, ուսանողների շարժը և մասնագիտությունների բաշխվածությունը, ուսումնամեթոդական աշխատանքները, քոլեջի ստորաբաժանումների գործունեության ամփոփ տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունը: Վերջին երեք տարիների հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք ևս նույնական են՝ ըստ տարիների փոփոխելով միայն քանակական տվյալները: Հարկ է նշել, որ դրանցում ներկայացված տվյալները, իրականացված գործընթացների արդյունքները չեն վերլուծվում քոլեջի կողմից՝ ըստ դրանց պլանավորելու հետագա բարելավման գործընթացները:

Քոլեջը, սահմանված կարգի համաձայն, իր գործունեության մասին քանակական տվյալներ և անհրաժեշտ հաշվետվություններ է ներկայացնում նաև լիազոր մարմիններին՝ ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե և այլն:

Տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով քոլեջը կիրառում է իր ֆեյսբուքյան հարթակը, որն ունի 1055 հետևորդ: Ֆեյսբուքյան էջում լուսաբանվում է տեղեկատվությունն ընդունելության քննությունների, թափուր աշխատատեղերի, իրականացված միջոցառումների մասին: 2025 թվականի սեպտեմբերին քոլեջը մեկնարկել է նաև պաշտոնական կայքի ստեղծման աշխատանքները: Հրապարակված https://gscoa.am/ կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներկայացված բաժինները դեռևս համալրված չեն, և քոլեջը նախատեսում է ապահովել ընդունելության, ուսումնական գործընթացի, համագործակցությունների մասին տեղեկատվությունն առաջիկայում: Կայքի համալրումը նախատեսվում է հայերենով, ռուսերենով և անգլերենով:

Քոլեջի ընթացիկ գործունեության լուսաբանման միջոցներից են նաև հաստատությունում փակցված գրատախտակները՝ վերջին նորությունների, հայտարարությունների, դասացուցակի վերաբերյալ և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում դեռևս հստակեցված չէ շահակիցների հետ հետադարձ կապի հաստատման, կայքի և ֆեյսբուքյան էջի համալրման պատասխանատվության շրջանակը: Առաջիկայում քոլեջը նախատեսում է ունենալ պատասխանատու, որը կզբաղվի կայքի համալրմամբ:

Շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներից են քոլեջի էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակով դիմորդները հիմնականում հետաքրքրվում են քոլեջի կրթական ծրագրերով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կողմից պարբերաբար կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը միտված

միջոցառումներ: Մասնավորապես, քոլեջի ուսանողները համերգներով և ցուցահանդեսներով հանդես են գալիս տարածաշրջանի հանրակրթական, արվեստի, երաժշտական դպրոցներում և ստեղծագործական կենտրոններում, գրադարաններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողները ներգրավվում են մարզային միջոցառումներում, հանդես գալիս երաժշտական կատարումներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ձևավորված է հաշվետվողականության ներքին համակարգ, որը հնարավորություն է տալիս պարբերաբար ամփոփել ստորաբաժանումների աշխատանքը: Այս մոտեցումը հիմք է հաշվետու կառավարման մշակույթի ձևավորման համար: Հաշվետվությունների ներկայացումը վերլուծական ձևաչափով՝ ընդգրկելով արդյունքների գնահատում, հաջողությունների և խնդիրների վերհանում, կդարձնի դրանք արդյունավետ գործիք ռազմավարական պլանավորման և բարելավման որոշումների կայացման համար:

Տնօրենի տարեկան հաշվետվությունները կարևոր են որպես կազմակերպության գործունեության գնահատման հիմնական հիմք: Դրանցում ներկայացվող տվյալների վերլուծությունն ու համադրությունը տարբեր տարիների կտրվածքով հնարավորություն կտան գնահատել առաջընթացը, բացահայտել փոփոխությունների պատճառները և նպատակային ուղղել ռեսուրսները: Սա Կառավարման խորհրդին կտրամադրի հստակ պատկեր՝ քոլեջի իրական արդյունավետության մասին և կբարձրացնի կառավարման հաշվետվողականությունը:

Քոլեջի կողմից պետական մարմիններին ներկայացվող հաշվետվությունները ապահովում են օրենքով սահմանված պահանջների կատարումը և հաստատության գործունեության թափանցիկությունը պետական կառույցների առջև: Սակայն հասարակության լայն շրջանակի համար բաց և հասանելի հաշվետվությունների հրապարակումը, որոնք ներկայացնում են կրթական, ֆինանսական և մշակութային արդյունքները, կնպաստեն վստահության ամրապնդմանը և քոլեջի հանրային հեղինակության բարձրացմանը:

Քոլեջի ֆեյսբուքյան հարթակը և կայքի ստեղծման նախաձեռնությունը կարևոր քայլեր են տեղեկատվության մատչելիության և հանրային թափանցիկության ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կայքի համալրումը ոչ միայն ընթացիկ տեղեկություններով, այլև քոլեջի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերով, միջոցառումների արդյունքներով, ուսանողների և շրջանավարտների ձեռքբերումներով, կդարձնի այն իրական հաշվետվության և հանրային հաղորդակցության գործիք: Սա կնպաստի շահակիցների իրազեկվածության բարձրացմանը և քոլեջի նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հետադարձ կապի համակարգի հստակեցումը՝ պատասխանատու անձի նշանակմամբ և կապի միատեսակ ձևաչափերի սահմանմամբ, կօգնի քոլեջին ավելի արագ արձագանքել շահակիցների հարցերին ու առաջարկներին:

Քոլեջի կողմից կազմակերպվող համերգներն ու ցուցահանդեսները կարևոր նշանակություն ունեն հանրությանը մշակութային արժեքների փոխանցման տեսանկյունից: Այս նախաձեռնությունների պարբերականությունն ու համակարգված կազմակերպումը կնպաստեն ոչ միայն մշակութային կյանքի հարստացմանը տարածաշրջանում, այլև քոլեջի դերի ամրապնդմանը որպես հանրային արժեք ստեղծող կրթական կենտրոն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, քոլեջն ապահովում է պետական լիազոր մարմիններին անհրաժեշտ հաշվետվությունների ներկայացումը, ձևավորված են հասարակության հետ հետադարձ կապի և

թափանցիկության ապահովման հարթակներ, ինչպես նաև իրականացվում են դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված այցեր, իրականացվում են համայնքային հաստատությունների ներգրավմամբ մշակութային միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Արտաքին կապերի զարգացումը քոլեջի ռազմավարական նպատակներից չէ: 2023թ. քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատվել է «Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը», որտեղ միջազգային գործունեության խթանումը՝ մասնավորապես ԵՄ կրթական ծրագրերին մասնակցությունը, աշխատակիցների միջազգային գործունեության, փորձի փոխանակման խթանումը, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված և տնտեսական երաշխիք ենթադրող սեփական առաջարկություններով միջազգային ամբիոններում հանդես գալը սահմանվել են որպես նպատակներ: Նպատակին հասնելու համար որպես խնդիրներ են դիտարկվել օտար լեզուների դասընթացների իրականացումը, օտար լեզվով դասավանդվող մասնագիտական առարկաների թվի ավելացումը, համատեղ կրթական ծրագրերի նախագծումը, մշակումը և իրականացումը, համատեղ հետազոտական նախաձեռնությունների իրականացումը, ակադեմիական շարժունությունը, ինչպես նաև տարբեր շահակիցների, այդ թվում՝ ձեռնարկությունների հետ համագործակցությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված նպատակների ուղղությամբ քոլեջը քայլեր դեռևս չի իրականացրել, այսպես օրինակ՝ նախատեսել է ավելացնել օտար լեզվով դասավանդվող դասընթացները, սակայն մասնագիտական դասընթացներ, որոնք իրականացվում են օտար լեզվով, քոլեջում առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի հստակեցրել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքների իրականացման պատասխանատվության շրջանակը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշակի աշխատանքներ գործատուների հետ կապերի հաստատման ուղղությամբ իրականացնում է կարիերայի պատասխանատուն: Նոր համագործակցությունները քննարկվում են քոլեջի ղեկավար կազմի կողմից, սակայն դեռևս հստակեցված չէ՝ ով է պատասխանատու նոր համագործակցության հնարավորություններ որոնելու, համապատասխան պլանավորում իրականացնելու և ցուցիչներ սահմանելու ուղղությամբ:

Հաստատությունն ունի իր կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան համագործակցություններ բոլոր ուղղություններով: Այսպես, ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար քոլեջը համագործակցում է տեղական 6 (Գավառի Հ. Թալալյանի անվան, Գանձակի, Կարմիր գյուղի երաժշտական, Գավառի գեղարվեստի, Նորատուսի, Սարուխանի արվեստի դպրոցներ) գործընկերների հետ: Քոլեջն ունի նաև շուրջ 12 համագործակցության համաձայնագիր գրադարանների, ուսումնական կենտրոնների, քոլեջների, արվեստի ու երաժշտական դպրոցների հետ (Վ. Պետրոսյանի անվան մարզային, Քաղաքային գրադարաններ, «Արևի աշխարհ» կենտրոն, Գավառի ուսուցողական կենտրոն և այլն):

Քոլեջը չի սահմանել միջազգայնացման գործընթացներից իր ակնկալիքները և չի իրականացնում պլանավորում այս ուղղությամբ: Հաստատության դասախոսները և ուսանողները սեփական նախաձեռնությամբ մասնակցում են միջազգային մրցույթների: 2024թ. քոլեջի դասախոսներից մեկը մասնակցել է "INTOF Armenia" կրթամշակույթային հասարակական կազմակերպության (Երևան) և "Verein T.I.W." (Վիեննա) երիտասարդական ծրագրերի և նախագծերի կենտրոնի հետ համատեղ կազմակերպած կրթամշակութային ուղևորությանը՝ «Նախագծային գործունեությունը ուսումնական հաստատություններում և երիտասարդական ոչ ֆորմալ կազմակերպություններում»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի սահմանել պահանջ մրցույթներից, կարողությունների զարգացման միջոցառումներից հետո փորձի փոխանակման միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

Ներկայումս դեռևս առկա չեն ակտիվ քայլեր «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ քոլեջը տեղական և միջազգային համանման կրթական ծրագրերն ուսումնասիրելու և լավագույն փորձը տեղայնացնելու փորձառություն դեռևս չունի:

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացությանը՝ հարկ է նշել, որ, ըստ ինքնավերլուծության, դասավանդողների 85%-ը տիրապետում է ռուսերենին, 37%-ը՝ անգլերենին, վարչական աշխատակիցների՝ 100%-ը ռուսերենին, 80%-ը՝ անգլերենին, ուսանողների 42%-ը՝ ռուսերենին, 28%-ը՝ անգլերենին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լեզվաիմացության մակարդակի գնահատում քոլեջը չի իրականացրել: Տվյալները ձևավորվել են շահակիցների հարցումների արդյունքում: Քոլեջը ուսանողների լեզվաիմացության մակարդակը բարձրացնելու համար կուրսը բաժանում է երկու մասի՝ փոքր խմբերով աշխատելու համար: Դասախոսական կազմի լեզվաիմացության մակարդակի բարձրացման նպատակով քոլեջի կողմից իրականացվել է կարճաժամկետ դասընթաց, որը նախատեսվում է շարունակել առաջիկայում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Երգեցողություն» կրթական ծրագրի համար անհրաժեշտ իտալերենի իմացության բավարար մակարդակի ապահովման ուղղությամբ քայլեր քոլեջը դեռևս չի կարողացել իրականացնել՝ պայմանավորված տարածաշրջանում մասնագետների բացակայությամբ: Առցանց դասավանդման հնարավորությունները չեն քննարկվել քոլեջի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ անգլերենով և ռուսերենով իրականացվող կատարումներում արտասանության շտկումներն իրականացնում են քոլեջի համապատասխան մասնագետները, մյուս լեզուների պարագայում՝ երգեցողության մոդուլներ դասավանդող դասախոսներն են փորձում աջակցել ուսանողներին՝ բնօրինակն ունկնդրելու միջոցով:

Դատողություններ: Գավառի արվեստի պետական քոլեջը ձևավորել է համագործակցային հիմքեր տեղական գործընկերների հետ՝ ապահովելով ուսանողների պրակտիկայի կազմակերպումը և գործատուների ներգրավումը ուսումնական գործընթացում: Այս համագործակցությունը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Սակայն արտաքին կապերի քաղաքականությունը և ռազմավարությունը դեռևս գտնվում են ձևավորման փուլում և չունեն համակարգային բնույթ: Քոլեջը դեռևս չի ապահովել արտաքին կապերի զարգացման հստակ ռազմավարության մշակում և իրականացման համար պատասխանատվության բաշխում, ինչի բացակայությունը սահմանափակում է գործընկերային կապերի կայունացման և ընդլայնման հնարավորությունները:

Քոլեջի միջազգային համագործակցության փորձը սահմանափակվում է անհատական նախաձեռնություններով՝ միջազգային մրցույթների և կրթամշակութային ծրագրերի մասնակցությամբ: Սակայն նման փորձառությունների ազդեցությունը հաստատության զարգացման վրա սահմանափակ է՝ դրանց արդյունքների ներքոլեջային տարածման և

վերլուծության բացակայության պատճառով: Համակարգային մոտեցման ձևավորումը և միջազգային փորձի փոխանցման մեխանիզմների ներդրումը կնպաստեն դասավանդման մեթոդների հարստացմանը և ուսուցման որակի բարելավմանը:

Արտաքին կապերի և միջազգայնացման հիմնական խոչընդոտներից է օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակը: Չնայած իրականացված կարճաժամկետ դասընթացներին և փոքր խմբերով ուսուցման ձևաչափին, լեզվական կարողությունների շարունակական զարգացումը և առցանց դասընթացների կիրառումը կարևոր նախապայման են միջազգայնացման հնարավորությունների ընդլայնման համար:

Քոլեջը դեռևս չի ձեռնարկել քայլեր միջազգային համագործակցության ծրագրերին, այդ թվում՝ «Էրազմուս+»-ին, մասնակցության ուղղությամբ: Այս իրավիճակը վկայում է, որ քոլեջը չունի բավարար կարողություններ և հստակ նպատակադրումներ միջազգայնացման գործընթացի իրականացման համար: Քոլեջին անհրաժեշտ է ձևավորել միջազգայնացման ռազմավարություն՝ հստակեցնել նպատակները, պատասխանատվության շրջանակները և ցուցիչները, ինչը թույլ կտա կառուցել համագործակցության երկարաժամկետ և կայուն հարաբերություններ՝ խթանելով հաստատության միջազգային ճանաչելիությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր առաքելությամբ ընդգծել է միջազգային կապերի հաստատման կարևորությունը, սակայն դեռևս չի պլանավորել և իրականացրել արտաքին կապերի և փորձի փոխանակման ուղղությամբ իր ներուժի գնահատում, միջազգայնացման և փորձի փոխանակման վերաբերյալ հստակ քայլեր, քոլեջում հստակորեն բաշխված չէ արտաքին կապերի հաստատման և զարգացման պատասխանատվությունը, «Էրազմուս+» և նմանատիպ ծրագրերին մասնակցության ուղղությամբ համակարգված քայլեր չեն իրականացվել, կրթական ծրագրերում բացակայում է տեղական և միջազգային փորձի համեմատական վերլուծությունն ու տեղայնացումը, իսկ դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացությունը բավարար չէ միջազգային փորձի ուսումնասիրման ու կիրառման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2024թ.-ից: Որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա՝ մշակելով «Որակի ապահովման կանոնակարգը», «Որակի ապահովման քաղաքականությունը», «Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգը», «Հարցումների անցկացման կարգը»: ՈԱ քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է քոլեջի կողմից շնորհվող որակավորումների որակն ու չափորոշչային պահանջները պահպանելը, շարունակաբար բարելավելն ու արդյունավետ կերպով կառավարելը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

որակի ապահովման ուղղությամբ սահմանված նպատակների իրականացման համար հստակ գործողություններ չեն մշակվել՝ հավաստելու որակավորումների շնորհման համապատասխանությունը չափորոշիչների պահանջներին:

Որակի ապահովման պատասխանատուի 2025–2026 ուստարվա պլանը ներառում է ընդհանուր ուղղություններ՝ ներքին գործընթացների բարելավում, թափանցիկության բարձրացում, գնահատման մեխանիզմների զարգացում և տվյալների հավաքագրման կատարելագործում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը չի սահմանել ՈԱ համակարգի գործունեությունից ակնկալվող արդյունքները, գործունեության գնահատման ցուցիչները: ՈԱ քաղաքականությամբ նախատեսված գործողությունները հիմնականում ընդհանրական են՝ շեշտադրելով կարիքների վերհանումը, տվյալների հավաքագրումը՝ առանց հստակեցված մեխանիզմների, պատասխանատվության բաշխման և ռեսուրսների հաշվառման: Արդյունքում, որակի ապահովման գործընթացները դեռևս չունեն համակարգված մոտեցում, դրանց արդյունքները չեն չափվում և չեն վերածվում շարունակական բարելավման ծրագրերի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար հատկացված է կես դրույքաչափ հաստիք: ՈԱ պատասխանատուն հաշվետու է տնօրենին: Քոլեջի տարածքային սղությամբ պայմանավորված՝ կարիերայի և որակի պատասխանատուներն իրենց գործունեությունն իրականացնում են մեկ աշխատասենյակում, որտեղ տեղակայված է նաև գրադարանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2025 թ. փետրվարից՝ որակի ապահովման նոր պատասխանատուի նշանակմամբ, քոլեջը սկսել է պարբերական հարցումների իրականացում ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում: Հարցաշարերը հիմնականում վերաբերում են ուսանողների և դասախոսների բավարարվածությանը քոլեջի ռեսուրսներից, վարչական և ուսումնաօժանդակ ծառայություններից ստացած աջակցությանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու օտար լեզվի իմացության մակարդակին:

Հարցաշարերի վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց բովանդակությունը մեծամասամբ ընդհանրական է. հարցերը չեն մանրամասնում ուսումնասիրության առարկան (օր.՝ «Բավարա՞ր են նյութատեխնիկական ռեսուրսները»՝ առանց հստակեցնելու՝ որոնք են այդ ռեսուրսները): Արդյունքում ստացվող տվյալները սահմանափակ են և չեն ապահովում խնդիրների խորքային վերլուծության հնարավորություն:

Հարցումների իրականացումը կատարվում է տարբեր խմբերի հետ, սակայն դրանց նպատակները, պարբերականությունը և մասնակիցների ընտրության չափորոշիչները նախապես հստակեցված չեն: Այս հանգամանքը նվազեցնում է տվյալների ներկայացուցչականությունը և վերլուծության հուսալիությունը: Որոշ հարցումների արդյունքները (օրինակ՝ ուսման և աշխատանքի համատեղման վերաբերյալ) հանգեցրել են միայն ընդհանուր առաջարկությունների ձևակերպման՝ առանց պատճառահետևանքային վերլուծության, ինչի հետևանքով բարելավման հստակ ուղղություններ չեն սահմանվել:

Հարցումների արդյունքները քննարկվում են քոլեջի ղեկավար կազմի հետ, սակայն հստակ խնդիրների և նպատակների բացակայությունը հանգեցնում է նրան, որ քննարկումները չեն վերածվում գործողությունների ծրագրերի: Ստացված տվյալները հիմնականում օգտագործվում են օպերացիոն բարելավումների (օրինակ՝ լսարանային պայմանների կամ տեխնիկական նյութերի ձեռքբերման) համար, բայց չեն դառնում կրթական ծրագրերի բովանդակային բարելավման կամ ռազմավարական որոշումների կայացման հիմք:

Քոլեջի կողմից կազմակերպվում են նաև ֆոկուսխմբային ոչ ֆորմալ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ուսանողներին հուզող հարցեր՝ կարգապահական, ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանդիպումները չեն արձանագրվել և դրանց արդյունքում բարելավմանն ուղղված գործողություններ չեն մշակվել:

Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությունը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը դիտվել է հիմնականում որպես փաստաթղթային պահանջի կատարում: Փաստաթղթում ներկայացված են քոլեջի գործունեության և կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ, սակայն բացակայում են դրանց վերլուծական մեկնաբանությունները, պատճառահետևանքային կապերը և բարելավման ուղղությունների հիմնավորումները:

Ինքնավերլուծության գործընթացը համակարգվել է տնօրենի և որակի ապահովման պատասխանատուի կողմից: Աշխատանքային խումբը ձևավորվել է բազմակողմ ներկայացվածությամբ՝ ընդգրկելով վարչական, դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչներ: Սակայն ինքնավերլուծության գործընթացը չի դարձել ներքին խորհրդակցության և ինքնագնահատման գործիք. փաստաթուղթը չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում, ինչը սահմանափակել է գործընթացի մասնակցային բնույթը և որակի մշակույթի ձևավորման ներուժը:

Արդյունքում ինքնավերլուծությունն ավելի շատ արձանագրում է իրավիճակը, քան վերլուծում այն՝ ինչու է այն ձևավորվել այդպես և ինչպես կարելի է բարելավել: Սա վկայում է, որ քոլեջում ինքնավերլուծության մշակույթը դեռևս ձևավորման փուլում է և պահանջում է կարողությունների զարգացում՝ տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և բարելավման պլանների մշակման ուղղությամբ:

Անդրադառնալով որակի ապահովման գործընթացների, կանոնակարգերի վերաբերյալ թափանցիկության ապահովմանը՝ հարկ է նշել, որ շահակիցների շրջանում տեղեկատվության ամբողջական հասանելիության ապահովման մեխանիզմներ դեռևս քոլեջում ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները հաստատված կանոնակարգերի, հարցումների արդյունքների վերաբերյալ հիմնականում տեղեկանում են ոչ ֆորմալ հանդիպումների ժամանակ: Նորաստեղծ վեբ կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսել է ունենալ նաև «Որակի ապահովում» խորագրով ենթաբաժին, սակայն չի հստակեցրել՝ ինչ տեղեկատվություն է նախատեսում հրապարակել և հասանելի դարձնել արտաքին շահակիցների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գավառի արվեստի պետական քոլեջը սկսել է ձևավորել որակի ապահովման ներքին համակարգ՝ մշակելով մի շարք ընթացակարգեր: Այս քայլերը կարևոր են, քանի որ ստեղծում են կառավարչական շրջանակ՝ որի միջոցով հնարավոր կլինի փաստաթղթավորել, հետևել և գնահատել կրթական գործընթացները: Սա ՈԱ մշակույթի ձևավորման նախնական փուլն է, որն անհրաժեշտ է քոլեջի զարգացման համար: Միևնույն ժամանակ, համակարգի գործարկումը դեռևս գտնվում է ձևավորման փուլում. առկա փաստաթղթերը նկարագրում են ընդհանուր մոտեցումները, բայց չեն պարունակում հստակ նպատակներ, չափելի ցուցիչներ և պատասխանատվությունների բաշխում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈԱ համակարգը դեռևս չի ապահովում տվյալների միջոցով հիմնավորված որոշումների կայացում: Օրինակ՝ ուսանողների, դասախոսների և գործատուների հարցումների արդյունքները հիմնականում ունեն ընդհանուր

բնույթ և չեն վերածվում վերլուծական եզրակացությունների կամ բարելավման գործողությունների։ Որակի ապահովման համակարգի արդյունավետությունը կայանում է նրանում, որ այն պետք է ապահովի համապատասխան շրջափուլ՝ հետադարձ կապ → վերլուծություն → բարելավման գործողություն → վերահսկում։ Այսպիսի մոտեցումը թույլ կտա քոլեջին ժամանակին հայտնաբերել ուսումնական գործընթացների թերությունները, արձագանքել շահակիցների կարիքներին և բարձրացնել շրջանավարտների պատրաստվածության մակարդակը։ Քոլեջին անհրաժեշտ է հստակեցնել որակի ապահովման համակարգի նպատակներն ու խնդիրները՝ դրանք ուղղակիորեն կապելով հաստատության առաքելության և ռազմավարական նպատակների հետ։ Սա թույլ կտա ՈԱ համակարգին դառնալ ոչ թե առանձին վարչական գործառույթ, այլ քոլեջի ընդհանուր զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասը։

Բարելավման գործընթացները նպատակային դարձնելու համար անհրաժեշտ է մշակել գործողությունների հստակ պլաններ՝ սահմանելով պատասխանատու անձանց, ժամկետները և անհրաժեշտ ռեսուրսները։ Այսպիսով, յուրաքանչյուր նախաձեռնություն կունենա չափելի արդյունք և վերահսկելի ընթացք։ Նպատակահարմար է ներդնել տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական մոտեցում, որը կապահովի որոշումների կայացումը փաստերի և վերլուծական տեղեկատվության հիման վրա։ Սա թույլ կտա որակի ապահովման համակարգին իրականացնել իր հիմնական առաքելությունը՝ աջակցել քոլեջին կրթության որակի շարունակական բարելավման և արդյունավետ կառավարման գործընթացների ձևավորման գործում։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, քոլեջը որակի ապահովման համակարգից ակնկալիքների վերաբերյալ հստակ պատկերացում չունի, որակի քաղաքականությամբ սահմանված նպատակները բավարար չափով փոխկապակցված չեն իրականացվող գործողություններին, կարիքների գնահատման արդյունքները որակական վերլուծության չեն ենթարկվում, շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է և ինստիտուցիոնալացված մեխանիզմներ չեն գործում, իսկ ինքնավերլուծության գործընթացը չի ներառել բոլոր շահակիցների ակտիվ մասնակցությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Գայանե Ավետիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

4-ը դեկտեմբերի, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գայանե Ավետիսյան՝ 1987–1992 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում՝ ստանալով աշխարհագետի և աշխարհագրության ուսուցչի որակավորում: 2006թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2014թ. արժանացել է դոցենտի գիտական կոչման: Գիտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են աշխարհագրական կրթության, տարածական զարգացման և զբոսաշրջության հիմնախնդիրները: 25 գիտական հոդվածների հեղինակ է:

Մասնագիտական գործունեությունը սկսել է 1991թ.՝ դասավանդելով աշխարհագրություն Գյումրու տարբեր հանրակրթական դպրոցներում (թիվ 26, թիվ 9 և թիվ 1 ավագ դպրոց)՝ մինչև 2020 թ. ներառյալ: 1994 թ.-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես աշխարհագրության և սերվիսի ամբիոնի դոցենտ: 2011–2012 թթ. դասախոսել է նաև ԵԿՏԱ համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնում: 2019–2022 թթ. եղել է Շիրակի պետական համալսարանի ռեկտորի օգնականը: 2022–2023 թթ. զբաղեցրել է ՇՊՀ աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2023 թ.-ից ղեկավարում է ՇՊՀ Որակի ապահովման բաժինը:

Աննա Մանասերյան՝ 2009-2011 թթ. սովորել է Երևանի Մ. Մաշտոցի անվան համալսարանում՝ հանրային սպասարկման (տուրիզմ) մասնագիտությամբ: 2011–2016 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ ստանալով բակալավրի աստիճան քանոնի կատարողական արվեստում, իսկ 2018–2020 թթ. ավարտել է նույն բուհի մագիստրատուրան՝ մասնագիտանալով քանոնի կատարման արվեստում:

Մասնագիտական գործունեությունը սկսել է 2008 թ-ից «Նարեկացի» նվագախմբում (մինչև 2019 թ.)՝ որպես քանոնահար, 2013-2017 թթ. նույն նվագախմբում եղել է նաև համակարգող: 2012–2014 թթ. դասավանդել է Երևանի Ա. Գաբրիելյանի անվան երաժշտական դպրոցում, իսկ 2015-2025թթ. Արարատ քաղաքի Ղ. Սարյանի անվան արվեստի դպրոցում:

2014 թ.-ից մինչ օրս դասավանդում է Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում՝ քանոնի ուսուցիչ: 2020 թ.-ից մինչ օրս աշխատում է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական քոլեջում՝ որպես դասախոս:

Ելենա Մովսեսյան՝ 1999–2004 թթ. սովորել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ Կերպարվեստի ֆակուլտետի Արվեստի պատմության և տեսության բաժնում և ստացել արվեստաբանի մասնագիտություն: 2006 թ.-ից ՀՀ նկարիչների միության անդամ է: 2005–2007 թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի «Հայ Արտ» մշակութային կենտրոնում՝ որպես ցուցահանդեսների կազմակերպիչ: 2007–2019 թթ. Էջմիածնի քաղաքապետարանի Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում դասավանդել է «Արվեստի պատմություն»:

2019-2024 թթ. հանդես է եկել Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիաում՝ գրախոսական գործունեությամբ:

2005 թվականից աշխատում է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում. 2005–2020 թթ. դասավանդել է «Արվեստի պատմություն» առարկան, 2013–2020 թթ. ղեկավարել է «Թերլեմեզյան» ցուցասրահը, իսկ 2020 թվականից պաշտոնավարում է

որպես տնօրենի տեղակալ՝ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով։

Վռվա Արզումանյան՝ ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետը, այժմ նույն բուհի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող է։ Ավարտել է Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանի Արևմտահայերենի և հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնը, ինչպես նաև Հայաստանի հանրային հեռուստաընկերության Մեդիա ակադեմիայի սցենարական վարպետության բաժինը։ Աշխատում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում՝ որպես սցենարիստ-լրագրող։

Հանդիսանում է ԵԹԿՊԻ-ի Ուսանողական գիտական, ստեղծագործական ընկերության նախագահը։ 2021 թվականից ԵԹԿՊԻ-ի կառավարման խորհրդի անդամ է, 2024-ից՝ քարտուղար։ 2023 թվականից աշխատում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում՝ որպես հանրային կապերի պատասխանատու։ Բացի այդ, հանդիսանում է «Ավանսեն» ֆրանկոֆոն երիտասարդական ասոցացիայի և Երկլեզու դրամատիկական արվեստանոցի հանրային կապերի և մարքեթինգի պատասխանատուն։ Մասնակցել է տեղական և միջազգային գիտաժողովների, որոնց շրջանակում ներկայացրած գիտական հոդվածները միջազգային հարթակներում արժանացել են մրցանակների։

Մասնակցել է ՈՒԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծին։ 2025 թվականից հանդիսանում է Եվրոպական ուսանողական միության (ESU) որակի ապահովման խմբի ուսանող-փորձագետ։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	**21.09.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի պարտականությունները կատարող փոխտնօրենի հետ	12:00	13:10	70 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	13:20	14:00	40 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	14:10	16:00	110 րոպե

N.	**22.09.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում կրթական ծրագրերի բաժինների վարիչների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի (10-12 ներկայացուցիչ) հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Դասալսումներ	11:30	13:00	90 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	14:20	15:10	50 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	15:20	16:10	50 րոպե
8.	Հանդիպում գործատուների հետ	16:20	17:10	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:30	70 րոպե

N.	**23.09.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների (Ուսումնական մասի վարիչ, պրակտիկայի վարիչ, կադրերի տեսուչ, կարիերայի պատասխանատու, գրադարանավար, բուժքույր, գլխավոր հաշվապահ, գնումների համակարգող, արխիվի վարիչ) հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	10:50	11:50	60 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ	12:00	12:40	40 րոպե

4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		12:50	13:50	60 րոպե
5.	Զուգահեռ հանդիպում **«Գործիքային կատարողական արվեստ»** և **«Երգեցողություն»** կրթական ծրագրերի պատասխանատուի և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «**Գեղանկարչություն**» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	14:00	15:00	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում **«Գործիքային կատարողական արվեստ»** և **«Երգեցողություն»** կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «**Գեղանկարչություն**» կրթական ծրագրի ուսանողների հետ	15:10	16:10	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		16:10	18:30	140 րոպե

N.	**24.09.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Բաց հանդիպում	10:30	11:10	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:20	13:00	100 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	14:20	16:00	100 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	17:00	50 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ


	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ռառզմավարական ծրագրի գնահատման ցուցիչներ	1
2.	Շրջանավարտների զբաղվածության տվյալներ	1
3.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ վերջին երեք տարիների, որտեղ առկա են նաև տնօրենի հաշվետվությունները	2
4.	Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
5.	2024թ. ֆինանսական կատարողական	2
6.	Բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններ /3 տարիների/	2
7.	Բաժնի ղեկավարների աշխատանքային պլաններ /3 տարիների/	2
8.	Բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները /3 տարիների/	2
9.	Տնօրենի 2024-2025թթ. հաշվետվություն	2
10.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման վերլուծություններ	2
11.	Պրակտիկայի օրագրեր	3
12.	Մատյաններ /յուրաքանչյուր կուրսից մեկական	3
13.	Քննական հարցաշարեր և հարցատոմսեր	3
14.	Գնահատման թերթիկների օրինակներ	3
15.	Ավարտական աշխատանքներ/վերջին 3 տարիների համար	3
16.	Ավարտական աշխատանքների ձայնագրություններ	3
17.	Ուսանողների և շրջանավարտների քանակը՝ վերջին երեք տարիների համար	4
18.	Շրջանավարտների տվյալների բազա	4
19.	Շրջանավարտների հետագծի ածի վերլուծություն	4
20.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
21.	Վարպետաց դասերի հիմքեր	4
22.	ՊԴ քանակը, միջին տարիքը/վերջին երեք տարիների համար/, կրթությունը	5
23.	Դասախոսական կազմի հաստիքացուցակ	5
24.	Դասախոսի ընտրության կարգ	5
25.	Բոլոր դասախոսների թղթապանակները	5
26.	Դասախոսի գնահատման կանոնակարգ	5
27.	Դասալսման ձևաթուղթ	5
28.	Դասալսումների փաթեթներ /վերջին 3 տարիների/	5
29.	Դասալսումների ժամանակացույց	5
30.	Սկսնակ դասախոսների զարգացման պլան	5

31.	Բոլոր դասախոսների անհատական առարկայական /մոդուլային/ թղթապանակներ	5
32.	Դասախոսի գնահատման հարցումների արդյունքներ/վերլուծություններ	5
33.	2025-2026 բյուջեի նախահաշիվ՝ ըստ տոկոսների ձևաչափի	5
34.	Դասախոսների վերապատրաստումներ /վերջին 5 տարիների/	5
35.	Դասախոս-թեկնածուների բազա	5
36.	Վարչական և ՈւՕ կազմի գնահատման հարցումների արդյունքների վերլուծություն	5
37.	Հետազոտական աշխատանքների կատարման ընթացակարգ	6
38.	Տարբեր կրթական ծրագրերից կուրսային աշխատանքների օրինակներ	6
39.	Տարբեր կրթական ծրագրերից ավարտական աշխատանքների օրինակներ	6
40.	Վերլուծական անոտացիայի օրինակներ /ուսանողների կողմից իրականացված	6
41.	Դասախոսների կողմից տպագրված գիտական հոդվածներ և ձեռնարկներ /վերջին 5 տարիների/	6
42.	Գրադարանի գրքային ֆոնդի տվյալներ	7
43.	Հանրային կապերի տարեկան կամ կիսամյակային ռազմավարական պլան	8
44.	Միջոցառումների պլաններ	8
45.	Գործատուների հետ կնքված պայմանագրեր	9
46.	Պրակտիկայի վայրերի ցանկ, պայմանագրեր	9
47.	Ներքին շահակիցների օտար լեզուներին տիրապետման վերլուծություն /3 տարիների կտրվածքով/	9
48.	ՈԱ պատասխանատուի տարեկան հաշվետվություն	10
49.	Ներքին շահակիցների կարիքների վերհանման հարցումների ցանկ և վերլուծություն	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարան,
4. բուժկետ,
5. գրադարան։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱՊՔ- Գավառի արվեստի պետական քոլեջ
ՀՀ ԿԳՄՍ նախարարություն- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կենտրոն

ՊԻԳԲ շրջափուլ- պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում շրջափուլ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈԱԱԿ- Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄԿՈՒ հաստատություն- Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություն

ԵՄ- Եվրոպական միություն

ԵԿՏԱ- Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադմեիա

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ